Նիկոլ Փաշինյանը մի ձեռքով շոյում է Պուտինին, մյուս ձեռքով՝ սեւ PR ու հակաքարոզչություն անում նրա դեմ: Դրա վկայությունն են Հանրային հեռուստաընկերության «Լուրերի» թողարկումները, որոնց հետեւելով տպավորություն է ստեղծվում, թե սրանք ոչ թե Հայաստանի, այլ որեւէ հակառուս երկրի, օրինակ, Լատվիայի լուրերն են:

Կարդացեք՝ էջ 4

Միայն այն, որ ՀՀ ՆԳՆ-ն ինքնաբուխ, թե Փաշինյանի ցուցումով պատգամավորական թեկնածուների երկքաղաքացիության հարցերով է զբաղվում, արդեն ծիծաղ է առաջացնում: Որտեղ էր այդ ՆԳՆ-ն, երբ Մեծ Բրիտանիայի քաղաքացի Արմեն Սարգսյանը Հայաստանում պաշտոնավարում էր որպես նախագահ՝ Նիկոլ Փաշինյանի սուտ վկայությամբ:

Կարդացեք՝ էջ 6



Նիկոլի խոսույթներին ես լուրջ չեմ վերաբերվում, երբ ասում է՝ այս կանեմ, այն կանեմ, որովհետեւ այսօր մի բան է ասում, հաջորդ օրը՝ մեկ այլ բան ասում, երրորդ օրը՝ լրիվ ուրիշ բանի մասին խոսում: Հիմա պետք չէ ներվ փչացնել, ուղղակի պետք է կենտրոնանալ այն բանի վրա եւ ամեն ինչ անել, որ Նիկոլը չընտրվի նորից:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 83 (4218), 23 մայիս, շաբաթ, 2026

www.hraparak.am

Նախօրեին ԵՊՀ ռեկտոր, ՔՊ-ական նախկին պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյանն իր էջով «կիսվել» էր Սուրեն Պապիկյանի՝ Կարապետյանների մասին հրապարակմամբ եւ գրել. «Դասալիքները չեն նահատակվում»: Հիշեցնենք, որ Սուրեն Պապիկյանն ամբիոնից բղավում էր, թե ինչու չեն Սամվել Կարապետյանի, նրա եղբոր ու քրոջ 6 որդիները «նահատակվել» պատերազմում: Երեկ նկատեցինք, որ ռեկտորը հեռացրել է այդ հրապարակումը: Արդյո՞ք ուշացումով գլխի է ընկել, որ իր ղեկավարած հաստատությունն ապաքաղաքական պետք է լինի, թե՞ հասկացել է, որ իր գրառումն ավելի շատ իշխող թիմի դեմ է՝ չե՞ որ նրանցից ոչ մեկը կարծես չի նահատակվել, եւ այդ 2 բառը նրանց ավելի շատ է սազում: Ի դեպ, մինչ իշխանափոխությունը Փաշինյանը քննադատում էր նախկին իշխանություններին՝ կրթական համակարգը կուսակցականացնելու համար, եւ խոստանում, որ բուհերն ապաքաղաքական կդարձնի:

Ընդդիմադիր ուժերից մեկի վերջին հարցումները մի քիչ անհանգստացնող արդյունք են գրանցել: Ըստ այդ հարցումների՝ ոչ միայն Նիկոլ Փաշինյանի, այլ նաեւ Սամվել Կարապետյանի եւ Արման Թաթոյանի ընտրազանգվածի մոտ կեսը չի պատրաստվում մասնակցել ընտրություններին: Չնայած հարցվածները հստակ ասել են՝ ուզում են, որ հենց այդ ուժն ընտրվի, բայց նշել են, որ դժվար թե մասնակցեն քվեարկությանը: Սա նշանակում է, որ գլխավոր խնդիրը ոչ այնքան այն է, թե ում են ընտրելու մարդիկ, այլ այն, թե գնալո՞ւ են արդյոք ընտրությունների: Ընդ որում, ամենից շատ կարող է տուժել Արման Թաթոյանի «Միասնության թեւերը». նրան համակրող զանգվածի մեջ առավել մեծ տոկոս են կազմում ընտրությանը մասնակցելուց հրաժարվողները: Եվ այս 2 շաբաթում ընդդիմությունը պետք է հատկապես այդ ուղղությամբ աշխատի, որ մարդկանց մոտիվացնի՝ գնալ քվեարկության:

Գրել էինք, որ ՔՊ-ն «վարձկանների» միջոցով է իր քարոզչությունն իրականացնում. 200-250 հազար դրամով կամավորներ են վարձել, որոնք, դռնեդուռ ընկած, ՔՊ-ի բուկլետներն են բաժանում: Բայց մեկ միավոր աշխատավարձի դիմաց փորձում են հնարավորինս շատ աշխատեցնել՝ միայն քարոզչությամբ ու բուկլետ բաժանելով չեն զբաղվում, այլ նաեւ մասնակցում են Փաշինյանի երեւանյան քարոզարշավներին, մասսովկա են ապահովում: Փաստորեն, ՔՊ-ն թրաֆիքինգի է ենթարկում երիտասարդությանը: Առանց այն էլ հեշտ գործ չէ ՔՊ մերժող Երեւանում ՔՊ-ի բուկլետը բաժանելը՝ շատերը վռնդում են, կոպտում՝ նրանց նույնացնելով Փաշինյանի հետ:

Մեղք է

Երբ հետեւում ես Նիկոլ Փաշինյանի՝ այս օրերի հոգեվիճակին ու հուսահատ ջանքերին, որով փորձում է համոզել, որ ինքն արժանի է նորից զբաղեցնելու ՀՀ վարչապետի պաշտոնը, մի կողմից խղճահարությամբ ես լցվում՝ տեսնելով նրա տառապանքները, հոգեկան ապրումներն ու ջղաձգումները՝ երեւի ոչ մի նորմալ մարդ չէր դիմանա եւ չէր գնա այդ ամենին, որովհետեւ, ի վերջո, մարդու առողջությունն ու կյանքն ավելի թանկ են, քան պաշտոնը, որը ստիպված ես ձեռք բերել այսքան նվաստացումների ու նման ծանր գնով: Եթե կորցնես առողջությունդ եւ հայտնվես հիվանդանոցային մահճին, այլեւս անիմաստ կլինի՝ վարչապե՞տ ես, թե՞ կանաչապատման ծառայության բանվոր: Վերջապես՝ մեծ թվով մարդիկ կամովին հրաժարվում են շատ ավելի մեծ երկրների ղեկավարների պաշտոններից եւ հանգիստ ապրում՝ իրենց կյանքից գոհ ու երջանիկ: Պաշտոնով ո՛չ սկսվում, ո՛չ ավարտվում է կյանքը: Առհասարակ, այսքան տեռորի, սպառնալիքների, շանտաժի ու պարտադրանքի գնով ձեռք բերված քվեները կարող ես նույնիսկ չմարսել: Չե՞ որ հասարակությունը պետք է ընդունի տվյալ անձին, նրա առաջնորդությունը: Չի կարող երկրի վարչապետը մի փոքր խմբակի կողմից ընդունելի լինել եւ շարունակել պաշտոնավարել: Այս անդուլ տվայտանքները, փողոցներն ընկած, ողջ թիմին «տոկի տված», գիշերը՝ ցերեկ, ցերեկը գիշեր սարքած, առանց մարդկանց հետ հարաբերվելու տարրական կանոնները պահելու, կարեկցանքից բացի նաեւ զզվանք է առաջացնում՝ ինչպե՞ս կարելի է այդքան իշխանության մեռած լինել եւ այդքան սիրել աթոռը: Ինչպե՞ս կարող է այսքան ագրեսիա հորդել մի մարդուց, այսքան ատելություն՝ իր աթոռի վրա աչք ունեցողների նկատմամբ, այսքան արհամարհանք՝ ՀՀ ընտրողի նկատմամբ, այսքան իրարամերժ ու հակասական հայտարարություններ՝ նման կարճ ժամանակամիջոցում:

Առողջապահության նախարար, ՔՊ նախընտրական ցուցակի առաջին կին Անահիտ Ավանեսյանը Փաշինյանի քարոզարշավի գլխավոր դերակատարներից է դարձել՝ երբ պետք է, երգում է, երբ պետք է, պարում է, անխտիր հավանության է արժանացնում Փաշինյանի ամենավատ հայտարարություն-սպառնալիքները, փոխանակ մարդկանց առողջական խնդիրներով զբաղվի: Նա, լինելով մարդ փրկող ոլորտի ղեկավար, երկրորդում է Փաշինյանին՝ ոմանց «կենդանի» մնալու հրաշքից զարմացած: Մեր իշխանական աղբյուրն ասում է, որ այդ ծառայությունները հենց այնպես չեն արվում, պարզվում է՝ նա մեծ ախորժակ ունի եւ ՔՊ-ի հաղթանակի դեպքում իրեն կառավարության նոր կաբինետում փոխվարչապետ է պատկերացնում: Նրա մտերիմները պատմում են, որ Ավանեսյանը համարում է, թե ինքն այնպես է ծառայել, որ լիովին վաստակել է նախարարից ավելի բարձր ստատուս ստանալու պատիվը:

ՇՈՒՄՆԵՐԸ ՆՎԱԳԵՑՐԵԼ Է

Նիկոլ Փաշինյանի մարզային եւ համայնքային այցերը դիվադադար են անում տեղի բնակիչներին: Փաշինյանի այցից մոտ 2-3 ժամ առաջ տվյալ համայնք դեսանտ է իջեցվում՝ ոստիկանության եւ ՊՊԾ գնդի կողմից, 2-3 գազել ոստիկան ու թիկնապահ են լցվում այդ տարածքը, բառի բուն իմաստով՝ սանրում են այն հատվածը, որտեղ պետք է տեղի ունենա հավաքը, եւ ելույթ ունենա Նիկոլ Փաշինյանը: Նախօրեին Արարատի մարզի Սուրենավան համայնքում՝ Փաշինյանի այցից առաջ, մի քանի գազել ուժայիններ են ժամանել, ստուգել ամեն քար ու թուփ, հարակից խանութներն ու տների բակերը: Ոմանց կարծիքով, անվտանգային միջոցառումներից զատ, սա նաեւ հոգեբանական ներգործության խնդիր է լուծում, փորձում են վախ ներշնչել տեղի բնակչությանը, որ հանկարծ մեկի մտքով չանցնի՝ Փաշինյանի քարոզարշավը հարամել: Ի դեպ, բժիշկ տիկնոջ հետ միջադեպից հետո Փաշինյանն ակնհայտորեն նվազագույնի է հասցրել քաղաքացիների հետ շփումը: Նա այցելում է համայնքներ, թաղեր, բայց չի շփվում բնակիչների հետ, միայն ելույթ է ունենում պիկապի վրայից, արագ քարտեզներ է բաժանում ու հեռանում: Նախօրեին Արարատի մարզում անգամ նրա բարձրախոսն էր փոխվել, Փաշինյանի ձայնը բավական վատ էր լսվում: Երբեմնի ժողվարչապետը, որ հայտարարում էր, թե Հայաստանում 3 մլն վարչապետ կա, այսօր փաստացի վախենում է շփվել ժողովրդի հետ, քանի որ դրանք, որպես կանոն, սկանդալներով են ավարտվում:

ԺԱՄԿԵՏԱՆՑ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ. ՔԿ-Ն ԵՎ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ԽՐՎԵԼ ԵՆ ՔՊ-Ի ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԳՈՐԾ

Երեկ տեղեկացանք, որ Մոնումենտի առանձնատների գործով, որն արդեն 8 տարի քննվում է, մեղադրանքներ են առաջադրվել Երեւանի նախկին քաղաքապետ Երվանդ Զախարյանին, Երեւանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության նախկին պետ Գագիկ Մազմանյանին, քաղաքապետարանի ճարտարապետության ու քաղաքաշինության վարչության նախկին պետ Արսեն Լալայանցին, ինչպես նաեւ՝ Երեւանի քաղաքապետի նախկին առաջին տեղակալ Կամո Արեյանին, որը մինչ օրս աշխատում է քաղաքապետարանում եւ սերտորեն համագործակցում է ՔՊ-ական իշխանությունների հետ:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Մայիսի 21-ին ԱԺ-ում՝ Ազգային ժողովի պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում, գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին հարցրել են Մոնումենտի առանձնատների գործի մասին, եւ նա ասել է, որ մինչեւ տարեվերջ դրա հետ կապված նորություններ ենք ունենալու: «Ունենք ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերով դրվագներ, որտեղ այդ թվում այս առանձնատները պահանջում ենք որպես ապօրինի գույք: Եվ մյուս ուղղությունը 2018 թվականին նախաձեռնված եւ մինչ օրս Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող վարույթն է, որով մենք այս տարի պլանավորում ենք, որ հանրությանը կիրազեկենք որոշակի առաջընթացի մասին: Կարծում ենք, որ մինչեւ այս տարվա վերջ նաեւ քրեական վարույթով կունենանք առաջընթաց: Մի շարք անձանց վերաբերյալ, որոնք այս տարածքներում ունեն առանձնատներ, մենք ապօրինի գույքի բռնագանձման հայցերն ուղարկել ենք դատարան»,- ասել է Վարդապետյանը:

Վարույթի նյութերը վերաբերում են 2003-2009 թվականներին: Ըստ դատախազության, այն ժամանակվա քաղաքապետ Երվանդ Զախարյանն Ազատության պողոտայի եւ Բաբայան փողոցի հատման մասում գտնվող 6000 քմ կանաչ տարածքը վաճառել է «Հայրենիք-Սփյուռք կամուրջ» ՀԿ-ին եւ եւս 6000 քմ, կրկին ուղիղ վաճառքով, օտարել է «Սուրբ Լազար» առողջապահական ՀԿ-ին, սակայն դրանք օտարման ենթակա չեն եղել: Նշվում է հողերի կադաստրային արժեքը՝ 197 միլիոն 712 հազար դրամ: Հետաքրքիր է, որ 2000-ականների սկզբին վերաբերող գործողությունների վերաբերյալ վարույթ է հարուցվում 2018 թվականին, 2026 թվականի ապրիլի վերջին էլ նոր մեղադրյալներ են ներգրավվում՝ ԱԺ ընտրություններից մոտ մեկ ամիս առաջ, այն դեպքում, երբ դատախազությունը քաջատեղյակ էր ապօրինություններից: Դեռ 2019-ին նույն Երվանդ Զախարյանին եւ քաղաքաշինության վարչության նախկին պետ Արսեն Լալայանցին մեղադրանքներ էին առաջադրվել «Հաղթանակ» զբոսայգու 10 հազար քառակուսի մետր տարածքն օտարելու գործով: Ու հանկարծ 7-8 տարի անց նորից գործը հանել են դարակներից:

Այս վարույթը Հատուկ քննչական ծառայությունը ժամանակին վարում էր լիարժեք գաղտնիության պայմաններում, եւ այն, փաստորեն, քնեցված վիճակում էր: Մեր աղբյուրներից որոշ տեղեկություններ պեղեցինք վարույթի վերաբերյալ: Արաբկիր համայնքի անտառային նշանակության այս տարածքը Երեւան քաղաքից խլվել է մայրաքաղաքի զարգացմանը միտված ներդրումային ծրագիր իրականացնելու անվան տակ: ՀԿ-ները հողերը գնել են կադաստրային արժեքով ու վաճառել շուկայական գներով: Այս պայմաններում հետագա գնորդներից ոչ մեկն օրենքով բարեխիղճ գնորդ չի կարող համարվել: «Ներդրողներին», որոնք մի քանի կազմակերպություն են եղել, Մոնումենտ թաղամասում, Բաբայան փողոցում չնչին գներով տարածքներ են տրամադրվել: Կեղծ աճուրդներ են կազմակերպվել, ներդրված կեղծ գնորդների միջոցով փոխել են հողերի նպատակային նշանակությունը, հողային օրենսդրության խախտումներ են թույլ տրվել, հողի կրկնակի վաճառք է իրականացվել: Հողերի փոխանցման սխեման այնքան բարդ է, այնքան անձինք են ներգրավված դրանում՝ հայտնի եւ անհայտ, որ գործով զբաղվող քննիչները «քարտեզագրել» են այն, որպեսզի լավ պատկերացնեն, թե ով ում եւ ինչ գներով է վաճառել ու վերավաճառել այդ հողերը:

Ինչո՞ւ են 2000-ականներին վերաբերող գործով, որը քննության առարկա է 2018-ից, հիմա միայն մեղադրանք առաջադրում, քննությունն է ակտիվանում: Դատախազությունից այս հարցին չեն պատասխանում: Դժվար չէ նկատել, որ սա ՀՀ գլխավոր դատախազության գործելաոճն է՝ գործերը հարուցել, դնել դարակում, պետք եղած պահին՝ քաղաքական հանձնարարությամբ հանել ու դնել մարդկանց առաջ: Այսպես է արվել նաեւ Անդրանիկ Թեւանյանի աբսուրդային գործով:

Ըստ Քննչական կոմիտեի՝ Անդրանիկ Թեւանյանը, «2024 թվականի ընթացքում հավաքագրվելով օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից, ... ապօրինի կերպով հավաքել եւ առանձնապես խոշոր չափերի՝ 622 հազար ԱՄՆ դոլար գումարի դիմաց վերջինիս է փոխանցել պետական գաղտնիք պարունակող՝ 2024 թվականի ապրիլին ԱԺ փակ, գաղտնի նիստում կայացած լսումների ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ ռուսերեն թարգմանված տեղեկություններ»: Թեւանյանն արձագանքեց, թե այդ ժամանակ ինքը չի եղել պատգամավոր՝ չէր կարող ԱԺ փակ նիստին մասնակցել եւ տեղեկություններ փոխանցել երրորդ անձին. ՔԿ-ն էլ պատասխանեց, թե Թեւանյանն ապօրինի կերպով է հավաքագրել նիստի նյութերը, ասել կուզի՝ նիստին մասնակցած մեկն է նրան փոխանցել այդ տեղեկությունները: Բայց հարց է առաջանում. ինչո՞ւ է 2024 թվականին կատարված արարքով այսօր միայն գործ հարուցվում: Ռուսաստանը նախկինում բարեկամական երկիր էր, որի հետ առնչությունը չէր կարող ընկալվել որպես լրտեսություն, հիմա քաղաքական վեկտորը բացահայտ փոխվել է, ընտրություններն էլ մոտ են, եւ քաղաքական ընդդիմությանը վարկաբեկելու համար բոլոր մեթոդներն էլ պիտանի են: Իսկ թե ինչ են ՔԿ-ն ու դատախազությունը գրում իրենց հաղորդագրություններում, էական չէ: Կարեւորը՝ ճիշտ ժամանակին վարույթներ հարուցեն ու ժամանակին էլ մոռանան դրանց մասին:

ՍՐԱՆՔ ՌԱՍԻՍՏՆԵՐ ԵՆ, ՖԱՇԻՍՏՆԵՐ, ՈՐՈՆՔ ՉՈՒՆԵՆ ՄԻՏՔ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երկու օր առաջ, առավոտյան ԱԱԾ աշխատակիցներ ներխուժեցին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավորության թեկնածուների ցուցակի երկրորդ համար Անդրանիկ Թեւանյանի գրասենյակ: Նախօրեին Փաշինյանն անձամբ էր հայտարարել, որ նրա նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվելու՝ պետական դավաճանության եւ լրտեսության մեղադրանքով: Տեղեկացանք, որ մայիսի 22-ին դատախազը միջնորդություն է ներկայացրել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ քրեական հետապնդում հարուցելու համար: Սակայն մայիսի 21-ին Թեւանյանը դեռ տեղյակ չէր, թե ինչում են իրեն մեղադրում, եւ ամենակարեւորը՝ նա ոչ մի անգամ չէր հարցաքննվել, չէր հրավիրվել իրավապահ մարմիններ: Իսկ նույն օրը տարածված ՔԿ հաղորդագրությունից իմացանք, որ «Թեւանյանը, 2024 թվականին հավաքագրվելով օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից, «Ռուսսիա Կովկաս» աշխարհաքաղաքական կենտրոնի տնօրեն հանդիսացող՝ օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցչի հանձնարարությամբ կատարել է լրտեսություն: Նա հավաքել եւ 622 հազար դոլարի դիմաց նրան է փոխանցել պետական գաղտնիք պարունակող՝ 2024 թ. ապրիլին ԱԺ-ում տեղի ունեցած փակ, գաղտնի լսումների ընթացքի եւ արդյունքների մասին ռուսերեն թարգմանված տեղեկություններ՝ այդկերպ կատարելով պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության»: Թե ինչու ԱԱԾ-ն ու ՔԿ-ն այդ գործին 2 տարի ընթացք չեն տվել եւ ինչ ապացույցներ ունեն այս պնդումների համար, պարզ չէ:

Նույն օրը, վաղ առավոտից ԱԱԾ աշխատակիցները քննչական գործողություններ են իրականացրել Անդրանիկ Թեւանյանի ղեկավարած «Մայր Հայաստան» կուսակցության գրասենյակում, ապա՝ նրա տանը: Նկատենք, որ այս ամենը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ արձակուրդում գտնվող Նիկոլ Փաշինյանը, որը, ի դեպ, այս պահին վարչապետ չէ, իր քարոզարշավի ժամանակ Թեւանյանին մեղադրեց պետական դավաճանության մեջ, ինչից հետո իրավապահները հլու-հնազանդ կատարեցին ՔՊ առաջնորդի հրահանգը:

Ռեժիսոր, հասարակական գործիչ **Հովհաննես Իշխանյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով Փաշինյանի՝ դավաճաններ բացահայտելու մարմաջի մասին, նկատում է. «Հայաստանում տրանսֆորմացիա է տեղի ունեցել: Մեր երկիրն ամբողջապես օկուպացիայի տակ է, այդ պատճառով էլ իրական պետական դավաճանները, նրանք, ովքեր մեզ դավաճանեցին, խաբելով, թե պայքարը հանուն հայրենիքի է: Հայաստանում կան Թուրքիայի ներկայացուցիչներ, իսկ Թուրքիան գործում է նաեւ ընդդեմ Ռուսաստանի: Բոլոր գիտակից մարդիկ հասկանում են, թե ինչ է տեղի ունենում, եւ միայն ծայրահեղ հավը կարող է հավատալ, որ Փաշինյանի հրահանգով հարուցված քրեական գործերը ճշմարիտ են, սկսած դեռ Յուրի Խաչատուրովի գործից, վերջացրած Ռոբերտ Քոչարյանի դեմ գործով: Ինչպես որ մեր հայրենակիցներից շատերը Բաքվում են գերության մեջ հայտնվել, այնպես էլ նույն ապօրինություններով մերոնք հանցագործ են հայտարարվում: Դավաճաններին չհեռացնելը հանգեցնում է նրան, որ նրանք այնքան են հղփացել, որ այդ իրենք են դավաճաններ փնտրում, բայց մենք, միեւնույն է՝ երկիրը փրկելու ենք սրանցից: Նրանք երկու օր առաջ Նարեկ Կարապետյանի մասին էին ստեր տարածում, Սամվել Կարապետյանի մասին սկսեցին ստեր տարածել, ինչ-որ ֆեյք, խաղալիք տեսանյութեր էին տարածում: Սրանց նպատակը հայ ժողովրդի ցեղասպանությունն է, այլ ոչ թե արդարություն հաստատելը: Այսօր հարկավոր է Անդրանիկ Թեւանյանին դատել՝ դատում են, պետք է Մարտուն Գրիգորյանի տուն մտնել՝ մտնում են: Սրանք ռասիստներ են, ֆաշիստներ, որոնք չունեն միտք ու բովանդակություն: Սրանք՝ մտածված, արցախցիների դեմ ատելություն են տարածում, իսկ հետո արդարանում են, թե իբրեւ միայն էլիտային նկատի ունեն, բայց ատելության բուրգը հենց այդպես է աշխատում: Նախ սկսում ես էլիտաներին թիրախավորել, իսկ հետո այդ ազդեցությունն անցնում է սովորական ժողովրդին»:

Ձեւակերպեցինք՝ իբր ինքն է դիմում տվել, ազատվել

Գրել էինք, որ մայիսի 14-ին Բերդ քաղաքում «Ուժեղ Հայաստան» դաշինքի հանրահավաքին մասնակցելու համար պաշտոնից ազատել են Այգեձորի միջնակարգ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող Արթուր Մելիքյանին: Ա. Մելիքյանը հեռախոսազրույցի ժամանակ կաշկանդվածի տպավորություն էր թողնում եւ իր խոսքում ասել էր, որ իրեն վաղուց են պաշտոնից ազատել, բայց չի հիշում, թե երբ: Ուշացումով Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրվել է Տավուշի մարզպետի տեղակալ, մարզպետին փոխարինող Նարեկ Ղուշչյանի որոշումը՝ մայիսից 14-ից Արթուր Մելիքյանին աշխատանքից ազատելու եւ նրա հետ 2023թ. հոկտեմբերի 19-ին կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին: Ն. Ղուշչյանի որոշման մեջ որպես հիմք նշված է Արթուր Մելիքյանի դիմումը: Մելիքյանն ինչո՞ւ պետք է դիմում տար, ինքնակամ ազատվեր բարձր վարձատրվող պաշտոնից: Մայիսի 14-ին Բերդում «Ուժեղ Հայաստան» դաշինքի հանրահավաքն է եղել, Ա. Մելիքյանն ինչպե՞ս է հանրահավաքին մասնակցելուց հետո, 70 կմ ճանապարհ կտրելով հասել Իջեւան եւ նույն օրը պաշտոնից ազատվելու դիմում գրել մարզպետի տեղակալին, որն էլ նույն օրը նրան ազատել է պաշտոնից:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՆՎԱԶՆ ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՀԱՄԵՄԱՏԵԼ ՄԱՍԻՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՊՐԱԾ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՀԵՏ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Արմեն Բաղդասարյանն** է:*

- Նիկոլ Փաշինյանն առավոտ կանուխ՝ ժամը 8-ին, հրատապ ասուլիսով հանդես եկավ: Ենթադրում ենք, որ Սամվել Կարապետյանի՝ խմբագիրների հետ հանդիպումը կանխելու եւ օրվա օրակարգը թելադրելու համար: Խոսեց Արցախի մասին եւ, բացառելով Արցախի վերադարձը, անկլավների հարցին անդրադարձավ, խոսեց «պետական դավաճանների» եւ ընդդիմադիր ուժերի մասին, հերթական անգամ ինքն իրեն մեծարեց ու ցեխ շպրտեց ընդդիմադիր ուժերի առաջնորդների վրա:

- Մի շատ կարեւոր դիտարկում, որին պետք է նաեւ մեծ ուշադրություն դարձնեն լրատվամիջոցները. Երբ Փաշինյանը խոսում է սահմանազատման, անկլավների մասին, նա նախ խոսում է Ալմաթիի հռչակագրի մասի, շեշտում է, որ սահմանին կարող են լինել օպտիմալացումներ, այսինքն՝ սահմանային փոփոխություններ: Փաշինյանը շեշտում է, որ 29 հազար 743 քառակուսի կիլոմետրը լինելու է անկախ ամեն ինչից: Երբ խոսք է գնում անկլավների մասին՝ ադրբեջանական 3 անկլավների եւ Արծվաշենի, ապա այստեղ հետեւյալ խնդիրն է առաջանում. ադրբեջանական 3 անկլավների տարածքը միասին մոտավորապես 43 քառակուսի կիլոմետր է, Արծվաշենը մոտ 31 ք/կմ է: Ես ունեմ որոշակի մտավախություններ. երբ համադրում եմ այս ամենը, ստացվում է, որ այդ երեք անկլավները փոխանակում են Արծվաշենի հետ: Այդ պարագայում ստացվում է, որ մենք Ադրբեջանին նորից պարտք ենք մնում մոտ 12 քառակուսի կիլոմետր տարածք, ինչը մոտավորապես Արաքսի երկայնքով միջանցք է: Եթե նման բան տեղի ունեցավ, ապա դա իշխանությունները կանվանեն օպտիմալացում: Ինչո՞ւ է Նիկոլ Փաշինյանը մշտապես այդ թիվը ֆիքսում: Թիվը ֆիքսելը սխալ է, որովհետեւ ամենակարեւորն այդ թիվը չէ, այո, թիվը եւս կարեւոր է, սակայն շատ ավելի կարեւոր է, որ հայկական կողմը շարունակի ունենալ վերահսկողություն հայ-իրանական սահմանի վրա: Սակայն Փաշինյանի ասելով կարող է թիվը պահպանվել, եւ միաժամանակ տեղի ունենալ օպտիմալացում, բայց այդ ամենի արդյունքում մենք կկորցնենք հայ-իրանական սահմանի լիարժեք վերահսկողությունը:

- Փաշինյանը նաեւ խոսել է Արցախ վերադարձի մասին, պնդել, որ չի լինելու վերադարձ: Որքան էլ զարմանալի թվա, նա Արցախը համեմատել է Բաքվի, Սումգայիթի ջարդերի հետ եւ զարմացած հարցրել՝ ինչո՞ւ սրանց մասին եւս չկա պահանջ:

- Այն, թե ինչու չկա պահանջ Բաքվի եւ Սումգայիթի հետ կապված, պատճառը շատ պարզ է. Լեռնային Ղարաբաղն ինքնավար էր դեռեւս Խորհրդային Միության տարիներին: ԽՍՀՄ փլուզումից հետո այն եւս ուներ հստակ միջազգային կարգավիճակ: Այն ինքնահռչակ պետություն էր, որը դիմել էր միջազգային հանրությանը, որպեսզի քննարկեին իր անկախության հարցը, իսկ միջազգային հանրությունն էլ իր հերթին դա համարել էր լեգիտիմ պահանջ, ինչի արդյունքում ստեղծվեց միջազգային մի կառույց, որը զբաղվում էր այդ հարցով: Անկախ այն բանից, թե այդ ճանապարհով հարցն ինչպես կլուծվեր, այն արդեն իսկ կարգավիճակ էր Լեռնային Ղարաբաղի համար: Այն, որպես ինքնիշխան երկիր, հայց էր ներկայացրել միջազգային հանրությանը, իսկ միջազգային հանրությունն այն ընդունել էր: Երբ դատարան հայց ես ներկայացնում, անկախ այն բանից, թե դատարանն ինչ վճիռ կկայացնի, հայց ներկայացնողը համարվում է հայցվոր: Լեռնային Ղարաբաղը, կրկնում եմ՝ ուներ միջազգային կարգավիճակ: Այ, հենց սա է Նախիջեւանի հայության, Բաքվի հայության եւ Արցախի հայության տարբերությունը: Հետեւաբար, դրանք նույն հարթության վրա դնելը խիստ սխալ է: Առնվազն տգիտություն է կարգավիճակ ունեցող Արցախի ժողովրդին համեմատել Մասիսի շրջանում ապրած ադրբեջանցիների հետ: Դրանք իրարից ծայրահեղ տարբեր են:

- Նիկոլ Փաշինյանն ասուլիսում խոսել է Անդրանիկ Թեւանյանի մասին ու ասել, որ Հայաստանում կան լրտեսներ, որոնց դեռ հետեւելու են: Պարզ է, որ Փաշինյանի հրահանգով է Անդրանիկ Թեւանյանի դեմ վարույթ հարուցվել: Թեւանյանին մեղադրում են 622 հազար դոլարի դիմաց լրտեսություն կատարելու մեջ: ԱԱԾ-ն առավոտ կանուխ գործի է անցել, փորձում են ահաբեկել ընդդիմությանը: Ի՞նչ է ուզում ասել Փաշինյանն այս քայլերով:

- Իշխանություններն արդեն քանի ամիս է՝ փորձում են համոզել բոլորին, որ Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ է տեղի ունենում՝ նկատի ունենալով Ռուսաստանի Դաշնությանը: Ինչքան ընտրությունները մոտենում են, բնականաբար, այդ թեման ավելի է թեժացվում, այնքան ավելի շատ է այդ մասին խոսվում, հատկապես որ քարոզարշավների ժամանակ Նիկոլ Փաշինյանը համոզվում է, որ իր գործերն այնքան էլ լավ չեն, եւ հեշտ չի լինելու հաղթանակ արձանագրելը, ուստի նա որոշել է այլ սցենարներ մշակել, նա ընդդիմադիր ուժերի դեմ գործեր է հարուցելու, հնարավոր է նաեւ անորոշ ժամկետով կասեցվեն առաջիկա ընտրությունները:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՆՑԵԼ Է ՊԼԱՆ Բ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

Հունիսի 7-ի ընտրությունների նախընտրական քարոզարշավում «մարտեր առանց կանոնների» ժանրով առաջնորդվող Նիկոլ Փաշինյանի վարքը, ինչպես արդեն գրել էինք, անհանգստացնում է նաեւ յուրայիններին: ՔՊ-ում մեծ թվով մարդիկ կարծում են, որ իրենց առաջնորդի անհավասարակշիռ պահվածքը, հատկապես քաղաքացիների վրա մատ թափ տալը, վիրավորելն ու սպառնալն իրենց ոչ թե առավելություն են բերելու, այլ՝ վարկանիշի կորուստ:

Սակայն, ինչպես մեր աղբյուրն է նշում, Փաշինյանի հաշվարկը բոլորովին էլ այն չէ, որ քարոզարշավի ընթացքում կարող է վարկանիշ բարձրացնել, հանրային կարծիք փոխել՝ հօգուտ իրեն, նա վաղուց է հասկացել, որ տանուլ է տալու քաղաքակիրթ պայքարում, չի կարողանալու պատասխանել ո՛չ ընդդիմախոսների, ո՛չ շարքային քաղաքացիների փաստարկներին, ուստի անցել է պլան Բ-ին: Իսկ այդ պլանը կազմված է տեռոր անելու, սպառնալու, ղժղժալու, վախեցնելու գործիքներից, որով փորձում է հասնել նրան, որ առանց այն էլ Հայաստանի քաղաքական դաշտից հիասթափված հանրության մի որոշ հատված վերջնականապես հիասթափվի, հույսեր չկապի ընտրությունների հետ եւ որոշում կայացնի հունիսի 7-ին չգնալ ընտրատեղամաս: Իսկ հայհոյանքն ու ղժղժոցը ակտիվացնեն գռեհիկ, ստորին խավին, որը 2018-ի հեղափոխական էյֆորիային է կարոտել եւ կարող է գնալ ընտրության, որ «նախկինները հետ չգան»:

Փաշինյանի հույսն այն է, որ ընտրություններում 50 տոկոսից ցածր մասնակցություն կգրանցվի, իսկ ինքը կմոբիլիզացնի իշխանական զանգվածին ու հասարակության անկիրթ հատվածին, կտանի տեղամասեր եւ փոքրաթիվ մասնակցության պարագայում կհաղթի: Փաշինյանն ակնհայտորեն կտրվել է իրականությունից, ժողովրդի հետ չի շփվում, հակառակ դեպքում կտեսներ, կհասկանար, որ վերջին օրերի իր պահվածքն ավելի շատ հակառակ էֆեկտն է թողել. եթե տատանվող ընտրազանգվածի ներկայացուցիչները մինչեւ վերջերս երկմտում էին՝ ընտրություններին մասնակցել, թե ոչ, ապա բժիշկ տիկնոջ, արցախցի տղամարդու հետ միջադեպերից հետո այլեւս հասկացել են, որ իրենցից յուրաքանչյուրը Փաշինյանի վերընտրվելուց հետո կարող է հայտնվել նրանց կարգավիճակում:

Մեր իշխանական աղբյուրը խոստովանեց նաեւ, որ Փաշինյանի մյուս հաշվարկն այն է, որ բռնաճնշումների ենթարկեն ընդդիմադիր մրցակիցներին: Սկզբում մտածում էին խաղից դուրս թողնել Սամվել Կարապետյանի ուժին, եւ դա էր նաեւ պատճառը, որ նման քանակի կեղծ վարույթներ էին հարուցում ընտրակաշառքի վերաբերյալ, ինչ-որ ձայնագրություններ դնում շրջանառության մեջ, մարդկանց կալանավորում՝ փորձելով տպավորություն ստեղծել, թե գործ ունեն ընտրազեղծարար ուժի հետ, ապա հիմա կարծես թե հասկացել են, որ չեն մարսի Կարապետյանի ուժին խաղից դուրս թողնելը, եւ հիմա նրա փոխարեն դիտարկում են Գագիկ Ծառուկյանին: Իմաստն այն է, որ ընդդիմադիր կոալիցիա ձեւավորելու հնարավորությունը չեզոքացվի: Բայց դա անելու են ոչ թե իրավական ճանապարհով, այլ փորձելու են ճնշել Ծառուկյանին, որ նա իր կամքով «զադնի դնի» եւ դուրս գա ընտրապայքարից, քանի որ ԲՀԿ-ի գրանցումը կասեցնելը հեշտ չէ: Այս սցենարի շրջանակներում է հարուցվել Անդրանիկ Թեւանյանի գործը, որին առավոտ շուտ ձերբակալեցին, եւ առավոտյան ժամը 7-ին ԱԱԾ դիմակավորված անձինք նրա կուսակցության գրասենյակում խուզարկություններ արեցին: Զուգահեռ, խուզարկություններ էին կատարում նաեւ ԲՀԿ ցուցակի թեկնածու, գործող պատգամավոր Մարտուն Գրիգորյանի՝ Գյումրիում գտնվող բնակարանում: Մի քանի օր առաջ էլ Փաշինյանը սպառնացել էր Գագիկ Ծառուկյանից վերցնել «Արարատցեմենտ» գործարանը, եւ անգամ դատախազությունը հաղորդագրություն էր տարածել: Սակայն ԲՀԿ-ի մեր աղբյուրները հավաստիացնում են, որ Ծառուկյանը մինչեւ վերջ գնալու է՝ «զադնի» չի լինելու:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՌԵՎՏՈՒՐ

ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՇԱՎԸ ԵՎ ՌՈՒՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՌԴ ԿԱՍԵՑՎԵՑ

Նիկոլ Փաշինյանը մի ձեռքով շոյում է Պուտինին, մյուս ձեռքով՝ սեւ PR ու հակաքարոզչություն անում նրա դեմ: Դրա վկայությունն են Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» ծրագրի թողարկումները: Դրանց հետեւելով տպավորություն է ստեղծվում, թե սրանք ոչ թե Հայաստանի, այլ մի որեւէ հակառուս երկրի, օրինակ, Լատվիայի լուրերն են: Ի դեպ, հենց այս երկրի մայրաքաղաքում՝ Ռիգայում է տեղակայված

The Insider հայտնի պարբերականի գլխավոր խմբագրությունը, որն օրերս նախընտրական վարկաբեկիչ «հետաքննություն» էր հրապարակել, ըստ որի՝ Հայաստանում մեծ ներդրում ունեցող բարերարներ Սամվել Կարապետյանն ու Գագիկ Ծառուկյանը ռուսական գործակալներ են, որոնց միջոցով Ռուսաստանի հատուկ ծառայությունները, իբր, փորձում են եղանակ ստեղծել Հայաստանում, ազդել ընտրությունների ելքի վրա:

Միայն լրատվական ծրագրերի անոնսներին հետեւելը բավական է՝ համոզվելու համար, որ Արեւմուտքի եւ Ռուսաստանի միջեւ հիբրիդային դիմակայությանը միացել է նաեւ Հայաստանը: Եկեք անցնենք Հ1-ի մայիսի 19-ի լուրերի վրայով:

Հարց. ո՞ր գործակալներին է Ռուսաստանն ուղարկել Հայաստան՝ Փաշինյանի դեմ պայքարելու, իսկ կադրում Սամվել Կարապետյանն ու Գագիկ Ծառուկյանն են: Ինչպե՞ս են աշխատում ռուսական հատուկ ծառայությունները՝ Ինսայդերի հետաքննությունը ներկայացվում է բառացի մեջբերումներով: Այս նյութի կապակցությամբ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը մայիսի 21-ին հանդես է եկել հայտարարությամբ, որում ասված է. «The Insider-ը, որն արդեն վաղուց վերածվել է մեդիամանիպուլյացիաների եւ հակառուսական սուտ քարոզչության գործիքի, շարունակում է կեղծիքներ արտադրել՝ կատարելով իր արտասահմանյան հովանավորների համապատասխան պատվերները»:

Ռուսաստանի իրավաբանական անձանց պետական ռեեստրում «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը գլխավորող Նարեկ Կարապետյանը նշված է որպես ՌԴ քաղաքացի՝ այս մասին ռեպորտաժին հաջորդում է ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հորդորը, թե մեզ դրսից չէ, որ պետք է ասեն՝ դեպի ԵՄ կողմնորոշվե՞լ, թե՝ ԵԱՏՄ:

Անգամ զանգվածային ընտրակաշառքների մասին Հ1-ի ամենօրյա սյուժեներում է հիշատակվում Ռուսաստանը: Ասվում է, որ ընտրակաշառք բաժանելու համար օգտագործվել են ռուսական բանկային քարտեր: Իսկ Դանիել Իոաննիսյանը պատմում է, որ իր ղեկավարած Իրազեկ քաղաքացիների միավորումը սահմանապահ ծառայության հետ ծրագիր է իրականացնում, որի շրջանակում «Զվարթնոցից» ու Բագրատաշենից Հայաստան մտնողներին թռուցիկներ են բաժանում, որոնցում գրված է, որ ընտրողների նկատմամբ ապօրինի միջամտությունները պատժվում են, եւ քվեարկության գաղտնիությունը պաշտպանված է: Հիմնավորումն այն է, որ, ըստ Իոաննիսյանի, արտերկրում գտնվող քաղաքացիների հանդեպ կա պարտադրանք՝ ընտրել որոշակի քաղաքական ուժերի: «Եվ մենք հասկացանք, որ դրսում գտնվող ՀՀ քաղաքացիներին պետք է կարեւոր ուղերձներ հասցնենք»,- ասում է Իոաննիսյանը՝ ակնհայտորեն նկատի ունենալով հենց ՌԴ-ն: Այս սյուժեն «Զվարթնոցում» է նկարահանված, կադրում բացառապես ռուսական քաղաքների անվանումներով չվացուցակն է՝ Մոսկվա, Եկատերինբուրգ, Նովոսիբիրսկ եւ այլն: Թույն ու ատելություն է նետվում հանրայինի եթերից Ռուսաստանի ուղղությամբ, իսկ բոլոր այն գործիչները, որոնք չունեն եվրոպամետ կողմնորոշում, հայտարարվում են դավաճաններ, լրտեսներ, ընտրակեղծարարներ:

Ի՞նչ են անելու Հ1-ի լուրեր պատրաստողները, եթե հանկարծ Քննչական կոմիտեն, հակակոռուպցիոնը, դատախազությունը իրենց «մատերիալ» չտան, եթե հանկարծ ԱԱԾ-ն չհամագործակցի իրենց հետ: Առհասարակ, լուրերի թողարկումը դիտողին կարող է թվալ, թե այն ԱԱԾ-ն է պատրաստում, ոչ թե՝ լրագրողները: Ամեն օր գաղտնալսումներ են ներկայացվում՝ երկար-բարակ, 3-4 րոպե տեւողությամբ անընթեռնելի, խիստ վիճելի հեռախոսային զրույցներ, սեւ ֆոնին, որոնք՝ բոլորն ունեն մեկ նպատակ՝ ապացուցել, որ «կալուգացու» «Ուժեղ Հայաստան» կուսակցությունն ընտրակաշառք է բաժանում: Ու ոչ մի անգամ Հ1-ի խեղճ հեռուստադիտողը չիմացավ, թե ինչ են խոսում իրար մեջ ՔՊ-ականները: Ոչ մի գաղտնալսում առ այն, թե ինչ է ասում Նիկոլն իր հպատակներին, նրանք իրար մեջ ինչ են քննարկում:

Փոխարենը՝ «Ուժեղ Հայաստանի» հետեւորդներին վերագրվող զրույցներ ենք լսում հանրայինի եթերից. խախտելով անմեղության կանխավարկածը՝ ռեպորտաժներում ներկայացվում է, թե իբր «թղթի պաչկով 20 հազարանոցներ» են Տաշիր ուղարկում՝ արցախցիների համար, ինչ-որ զինվորականների համար գազ ու բենզինի փող, որ գնան Նարեկ Կարապետյանի հետ հանդիպման, ու կադրում Կարապետյանն է՝ զինվորականի հետ խոսելիս: Արդեն իսկ այն հանգամանքը, որ այսքան գաղտնալսվելուց ու խայտառակ լինելուց հետո էլ մարդիկ հեռախոսով փողի անուն են տալիս, վկայում է, որ «բացահայտումները» կեղծ են:

Ծառուկյանի «Արարատցեմենտի» դեմ հարձակումը, ԲՀԿ ցուցակի մասին: Հայաստանում գտնվող քաղաքացիներին մենք իրազեկում ենք այդ մասին հեռուստատեսությամբ, ռադիոյով եւ սոցցանցերով, ինչպես նաեւ՝ մետրոյում եւ հանրային տրանսպորտի կանգառներում, իսկ այն ընտրողները, ովքեր Հայաստանից չեն, արտերկրից են գալիս Հայաստան ընտրության, իրազեկվում են սահմանապահների աջակցությամբ՝ բուկլետների շնորհիվ:

- Դա ի՞նչ է տալու Ձեզ, այն պայքարի արդյունավե՞տ ձեւ է:

- Եթե համարեինք, որ արդյունավետ չէ, ապա դրա վրա փող չէինք ծախսի: Բուկլետները տրամադրում ենք «Զվարթնոց», «Շիրակ» օդանավակայաններից, Մեղրիի անցակետից, Բագրատաշենից, Բավրայից, Այրումից եւ այլն:

- Քանի՞ բուկլետ է տպվել:

- Կարծեմ՝ 200 հազար:

- Իսկ այս շրջանում շա՞տ են մարդիկ արտերկրից գալիս, բուկլետներն արա՞գ են սպառվում:

- Ամսվա վերջին այդ ստատիստիկան կամփոփենք:

- Նման բուկլետներ հեղինակելն ո՞ւմ նախաձեռնությունն է եղել:

- Այն եղել է մեր նախաձեռնությամբ:

- Իսկ գումար որտեղի՞ց, բուկլետ տպելը՝ 200 հազար օրինակով, ծախսատար պրոցես է:

- Չէի ասի: Ձեր կարծիքով՝ ինչքա՞ն գումար ենք ծախսել: 2 միլիոն դրամից քիչ է ծախսվել այդ ամենի վրա: Լրիվ մենք ենք վճարել, ոչ մի լումա չի ծախսվել պետական բյուջեից:

- Գուցե մասնավոր մեկն է ֆինանսապես աջակցել ձեզ, կամ եվրոպական գումարներից է:

- Ոչ, որեւէ քաղաքական ուժ ինչպե՞ս կարող է մեզ ֆինանսավորել, մենք դիտորդական առաքելություն ենք իրականացնում

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՀՀ ԺԱՄԱՆՈՂ ԲՈԼՈՐ ԱՆՁԱՆՑ «ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ» ԵՆ

Մենք տեղեկացանք, որ տեւական ժամանակ է՝ Հայաստան մուտք գործող բոլոր ՀՀ քաղաքացիները՝ ՀՀ սահմանը հատելիս, ինչ-որ նախընտրական բուկլետ են ստանում օդանավակայանում կանգնած մարդկանց կողմից: Բուկլետում գրված է, թե ինչպես քաղաքացիները պաշտպանեն իրենց ընտրական իրավունքը, դրա գաղտնիությունը եւ, որ ամենակարեւորն է՝ ոչ մի պարագայում չվերցնեն ընտրակաշառք, հակառակ պարագայում կենթարկվեն 7 տարվա ազատազրկման: Բուկլետները բաժանում են «Զվարթնոց» օդանավակայանում, ժամանող քաղաքացիներին են տալիս, ինչն արհեստական հերթեր է գոյացնում եւ մարդկանց համար փոքրինչ անհարմարություններ ստեղծում: Բուկլետների հեղինակը Դանիել Իոաննիսյանի «Իրազեկ քաղաքացիների միավորում»-ն է: Ինչ նպատակով է Իոաննիսյանի ՀԿ-ն որոշել նման աշխատանք իրականացնել, ինչ միջոցներով, արդյո՞ք կա քաղաքական պատվեր, թե՞ ոչ, սա արվում է «հիբրիդային պատերազմի» դեմ պայքարի անվան տակ, որը ֆինանսավորվում է Եվրամիությունից, թե՞ հենց Դանիելի գաղափարն է: Այս հարցերի մասին «Հրապարակը» զրուցել է **Դանիել Իոաննիսյանի** հետ:

- Ինչո՞ւ է Իրազեկ քաղաքացիների միավորումը որոշել նման բուկլետներ տպել եւ դրանք սահմանային անցակետերում բաժանել:

- Մեր աշխատանքի բաղադրիչների մեջ մտնում է նաեւ հանրությանը զգուշացնել, օրինակ, ընտրակաշառքի անթույլատրելիության, պատժելիության մասին, ինչպես նաեւ՝ քվեարկության գաղտնիության

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԻՊ

ԱՆԻՐԱՎ ՍՏՐՈՒԿԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ԼԻՆԵԼ

Տիկոլ Փաշինյանը եւ նրա թիմակիցներն ամենօրյա ռեժիմով հարձակվում են արցախցի փախստականների վրա, նրա աջակիցները խախտում են կանանց իրավունքները՝ թիրախավորելով նրանց երեխաներին, վիրավորելով արժանապատվությունը, իշխանությունը համատարած վարչական ռեսուրս է օգտագործում, հարյուրավոր եւ հազարավոր կանանց, երեխաների՝ իրենց կամքին հակառակ, բռնի քշում են Փաշինյանի հավաքներին՝ որպես գլխաքանակ, եւ ինչ է անում այդ նույն ժամանակ մարդու իրավունքների պաշտպան աշխատող Անահիտ Մանասյանը: Իհարկե՝ անատամ, ընդհանուր բնույթի եւ ոչինչ չասող հաղորդագրություններ է տարածում՝ հավասարության նշան դնելով հանցագործի եւ զոհի միջեւ, դրանով մեղսակից եւ մասնակից դառնալով հանցագործության իրականացմանը:

Արդյո՞ք Մանասյանը կարդացել է ՀՀ Սահմանադրությունը եւ ընդհանրապես գիտի, թե ինչ է նշանակում մարդու իրավունքներ, որովհետեւ, եթե դու մի բան պետք է պաշտպանես, նախ պետք է պատկերացում ունենաս դրա մասին, պետք է իմանաս, թե ինչն ես պաշտպանում: Թող գոնե մի անգամ բացի Սահմանադրությունը, կարդա դրա 3-րդ հոդվածի առաջին պարբերությունը՝ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների եւ ազատությունների անքակտելի հիմքն է»: Պարզ գրված է, չէ՞. արժանապատվությունը մարդու իրավունքի անքակտելի մասն է, երբ արցախցի փախստականին մեղադրում են փախչելու կամ չմեռնելու մեջ, երբ Փաշինյանը սպառնում է ընդդիմության առաջնորդներին սատկացնել կամ սեռական օրգանները կտրել, դրա մեջ արժանապատվության կոպիտ խախտում չկա՞: Երբ կին լրագրողից փաշինյանական քարոզիչը կամ ակտիվիստը պահանջում է նշել իր երեխայի հոր անունը, արդյո՞ք դա կնոջ արժանապատվության կոպիտ խախտում չէ: Իսկ ի՞նչ արեց մարդու իրավունքների պաշտպան կոչեցյալը: Ահա մի հատված 3 օր առաջ նրա տարածած հայտարարությունից. «Ամենօրյա ռեժիմով արձանագրվում են մի շարք դեպքեր, երբ քաղաքական բանավեճը տեղափոխվում է փոխադարձ վիրավորանքի, թշնամանքի, անհանդուրժողականության եւ հանրային պառակտման վտանգավոր դաշտ: Նման խոսույթը խորացնում է հասարակական բեւեռացումը, խաթարում հանրային համերաշխությունը եւ վտանգում խաղաղ համակեցության մթնոլորտը»: Այս տեքստից դուք հասկանո՞ւմ եք, թե ով է ում վիրավորել, ով է վիրավորանք, թշնամանք կամ անհանդուրժողականություն տարածողը եւ ով՝ զոհը: Երբ կոչն անհասցե է, երբ դու մատնացույց չես անում վիրավորողին, չես դատապարտում կոնկրետ անձի կամ կազմակերպության գործունեություն, դա ոչ միայն անիմաստ է, այլեւ՝ խիստ վտանգավոր, որովհետեւ դրանով դու զոհի եւ հանցագործի միջեւ հավասարություն ես դնում, խախտում ես զոհի պաշտպանված լինելու իրավունքը՝ փոխանակ այն պաշտպանելու:

Իշխանությունը, օգտագործելով իր ողջ պատժիչ մեքենան, հարձակվել է հասարակության վրա, ընդդիմության բազմաթիվ ներկայացուցիչներ կալանավորված են, մարդիկ իրենց քաղաքական հայացքների համար ենթարկվում են ամենատարբեր հալածանքների, մարդուն միայն Փաշինյանի պաստառը պոկելու համար կալանավորում են, հետո՝ հոգեկան հիվանդ հռչակում, ապա՝ հասցնում ինքնասպանության: Եվ ի՞նչ է ասում այդ ժամանակ մարդու իրավունքների պաշտպան աշխատող Անահիտ Մանասյանը. ասում է՝ ինձ վրա հույս չդնեք, ես այդ ամենի հետ կապ չունեմ, մարդու կյանքի, արժանապատվության, ընտրական իրավունքի բռնաբարումն ինձ հետ որեւէ կապ չունի: Նրա հարցազրույցն այլ տպավորություն չի թողնում. «Որեւէ դերակատար մարդու իրավունքների պաշտպանին ընտրությունների ժամանակահատվածում կամ նախընտրական փուլում չպետք է դիտարկի որպես ընտրությունների կամ ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին եւ ոչ էլ ընտրությունների մշտադիտարկում իրականացնող մարմին: Մարդու իրավունքների պաշտպանը ընտրությունների ժամանակահատվածում, նախընտրական փուլում, հետընտրական փուլում, այո, ունի գործառույթներ, բայց դրանք պայմանավորված են բացառապես այդ գործընթացներում իրավունքների պաշտպանության ու խթանման մեխանիզմների հետ եւ, բնականաբար, չեն էլ կարող համընկնել այլ մարմինների լիազորություններին, որովհետեւ, օրինակ, հաճախ կարծիքներ են արտահայտվում, որ այս դեպքում դուք պետք է արձանագրեիք վարչական ռեսուրսի չարաշահում կամ պիտի հստակ զբաղվեիք պաստառների հետ կապված տարբեր խնդիրներով, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, որոնք, ըստ էության, դասական առումով մարդու իրավունքների պաշտպանի լիազորություն չեն, դրանց համատեքստում կարող են լինել հարցեր, որոնք վերաբերելի լինեն պաշտպանի գործիքակազմին»: Այսինքն, եթե մարդու ընտրելու կամ ընտրվելու իրավունքը խախտվի, դրա հետ Մանասյանը կապ չունի:

Իսկ ինչն է վերաբերելի պաշտպանի գործիքակազմին: Մանասյանին թվում է, թե ինքը բարոյախրատական տեքստեր կամ կենաց արտասանող է, մանկապարտեզի դաստիարակ է, որ երեխաներին հանդարտության եւ խելոք խաղալու կոչ է անում՝ մոտավորապես այսպիսի ողորմելի տեքստեր արտասանելով. «Մարդու իրավունքների պաշտպանը կոչ է անում քաղաքական բոլոր ուժերին, նրանց ներկայացուցիչներին, պաշտոնատար անձանց եւ հանրային գործիչներին՝ դադարեցնել վիրավորանք, անհանդուրժողականություն եւ բռնություն քարոզող խոսքի ցանկացած դրսեւորում, բացառել հասարակությունը բեւեռացնող եւ լարվածությունը խորացնող խոսույթի տեսակները, իսկ քաղաքական պայքարը կառուցել բացառապես ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների եւ փոխադարձ հարգանքի հիման վրա»: Լավ է՝ չի գրել՝ բոլոր քաղաքական ուժերին, բացառությամբ ՔՊ-ի:

Մարդու իրավունքների պաշտպանը պետք է լինի խիզախ եւ ըմբոստ մեկը, որը պետք է ունենա այնքան բարոյական հեղինակություն, որ չվարանի իշխանության եւ նրա ղեկավարի դեմքին ասելու այն, ինչ մտածում է նրանց գործողությունների մասին, եւ ինչո՞ւ հենց իշխանության. որովհետեւ մարդու իրավունքները խախտվում են առավելապես իշխանության ներկայացուցիչների եւ ոչ թե «բոլոր քաղաքական ուժերի» կողմից, ինչպես ասում է Մանասյանը: ՄԻՊ-ը նախ ինքը պետք է ունենա արժանապատվություն, կարողանա պաշտպանել սեփական արժանապատվությունը, որ հետո էլ կարողանա պաշտպանել այլոց արժանապատվությունն ու իրավունքները: Մի՞թե կարելի է բացարձակ իրավունքներ չունեցող ստրուկին նշանակել իրավունքի պաշտպան եւ նրանից իրավունքի պաշտպանություն ակնկալել:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀՈԳԵՀԱՅ՝ ՏԱՆՁԻ ԱՐԱՂՈՎ

Ամեր հարեւան Շմավոնի ռեյտինգը շենքում «ընկել» է: Նա, որ ժամանակին հայտնի էր ցենզուրայից անդին իր «ազատ» խոսքով, այսօր Փաշինյանի քարոզարշավի պատճառով մնացել է ստվերում, ավելի ճիշտ՝ Փաշինյանի խոսքերի ստվերում՝ «կզըցնեմ», «սատկացնեմ», «կոխեմ համապատասխան տեղը», «թափ տամ», «չոքացնեմ»: Շենքի ժողովուրդն այլեւս Շմավոն չի լսում… Բնակարաններում փակված՝ Փաշինյան են լսում՝ համ ձրի, համ ապահով:

Շմավոնը, սակայն, չի պատրաստվում դիրքերը զիջել: Ո՞նց թե, ասում է, ես Շմավոնը լինեմ, ու քաղաքում ինձնից զիլ քֆուրչի հայտնվի՞… Ես դրա…

Հազիվ հանգստացրի.

- Շմավոն ջան, կարիք չկա, ժամանակավոր է այս ամենը, 16 օր մնաց, ռադը կքաշի, կգնա, էլի դու կլինես առաջինը: Քարոզարշավ է, կապը կտրել է, ոչինչ, ամսի 7-ին մի բաժակ ջուր կտանք, կխմի՝ կհանգստանա:

- Դու դրան տեսե՞լ ես, դա հանգստացող պտո՞ւղ է, դու տեսե՞լ ես դրա հետ քայլող կնանիքին, որ ամեն քֆուրի ծափ են տալիս:

- Շմավոն ջան, դու քարոզարշավից շատ քիչ բան ես հասկանում: Քարոզարշավի ժամանակ տղամարդն ու կնիկը ո՞րն է, մեծն ու փոքրը ո՞րն է: Բա որ քարոզարշավի ժամանակ էլ չքրֆեն, ե՞րբ պիտի քրֆեն:

- Ես որ քրֆում եմ, իմ քֆուրի պատասխանն էլ գրպանումս է: Դրանք, որ լեզուներն այդքան հանել են, կարմն պատասխան տան իրենց քֆուրների համար: Ալիեւը 5 տարի է՝ ասում է. կգացրել եմ Հայաստանին, ուզածս ստացել եմ, մի բան էլ ավել… Բա պլ.րով տղա եք՝ Ալիեւին կզըցրեք, պատասխան ուզեք… Չեն ուզի, վախենում են, գիտեն, որ Ալիեւն իր ասածների համար պատասխան տվող տղա է: Ասա՝ դու ո՞վ ես, որ կարենաս մարդ կզըցնել…

- Հանգստացիր, Շմավոն…

- Չեմ հանգստանա… Ումո՞վ է վերվեր թռչում… ԱԱԾ, ներքին գործեր, քննչական, դատախազություն, դատավոր՝ բոլորին փողերը տվել՝ գցել է ժողովրդի ջանին, վախեցնում է, քֆուր է տալիս: Թող փորձի մի հատ իր բարձրախոսով մտնել մեր հայաթ ու քֆուր տալ: Էդ բարձրախոսը կվերցնեմ ու կկոխեմ… Հերիք եղավ, բոլ եղավ:

- Շմավոն, դու ընդդիմադի՞ր ես:

- Չէ:

- Դե ուրեմն հանգստացիր: Նորից եմ ասում՝ այս ամենը ժամանակավոր բան է, մեծ վախի հետեւանք: Կարծում ես՝ իշխանությունը կորցնելը խաղուպա՞մ է: Որ կորցրեց, էն քո թվարկած «օրգաններն» իր հետեւից են ընկնելու, իր բնակարանն ու աշխատասենյակն են խուզարկելու, իրեն են քարշ տալու դատարան ու բանտ: Ես ու դու ի՞նչ, շարքային խմող մարդիկ ենք՝ Արցախ չենք տվել, 5 հազար տղու գլուխ չենք կերել, մեր պատճառով 10 հազարից ավելի մարդ հաշմանդամ չի դարձել, Եկեղեցի չենք քանդել, միլիոններ չենք լափել… Նա այս բաների համար է, որ չի կարող պատասխան տալ, թե չէ՝ քֆուրն ի՞նչ՝ օդի մեջ ասված խոսք է…

- Չես համոզի, ես դրա քֆուրների տակ մնացողը չեմ, ինքն ու հետի ավարաները պիտի պատասխան տան ամեն բառի համար:

- Ի՞նչ պիտի անես, ավելի ուժե՞ղ պիտի քրֆես… Կբռնեն, Շմավոն, կասեն՝ ինչպե՞ս ես համարձակվում խոսել պետության հետ, ու կբռնեն: Ինչ այլանդակություն կա՝ իրենցից սպասելի է: Ողորմած պապիդ պատմությունը հիշիր, թե ոնց են տարել, սիբիրներում կորցրել: Հայաստանում հիմա այդպիսի ժամանակներ են գալիս: Գործ չունես, ո՛չ բալկոնից մատ ցույց կտաս, ո՛չ էլ գիշերանոթով ջուր կլցնես վրաները: Պետական հանցագործի պիտակը կկպցնեն հետույքիդ, ու հայդա՝ Նուբարաշեն:

-… կուտեն:

- Էդ արդեն չեղավ, Շմավոն, իջնում ես Ն. Փ.-ի, Ա. Ս.-ի, Ս. Պ.-ի, Ռ. Ռ.-ի, Ա. Թ.-ի, Վ. Ա.-ի, Հ. Կ.-ի ու մնացած գյադագյուղաների մակարդակին: Իրենք շատ են, դու՝ մենակ: Մի «խովլաթ» տեղ կբռնեն, կտան ոստիկանի ձեռը… Քեզ պե՞տք է:

- Բա ի՞նչ անեմ, սիրտս պայթում է:

- Ինչ էլ լինի, Շմավոն ջան, ինքնագլխություն չանես: Հունիսի 7-ը սարերի հետեւում չէ: Առավոտյան իրար հետ կգնանք ընտրատեղամաս, էդ նորահայտ քֆուրչիների 16 համարի թերթիկը կգցենք «աղբարկղը», մեր ուզածին կընտրենք ու կգանք տուն: Աներոջդ տանձի արաղից դեռ ունես, չէ՞… Հիշում եմ, վերջին անգամ տակը ահագին մնաց: Մեր տանն էլ «ժարկոյի» լավ մատերիալ կա… Քո ֆազենդայում՝ թարմի տակ, կնստենք ու…

- Ասում ես՝ ընտրությունով հարց կլուծվի՞…

- Իհարկե: Որ սրանցից զզվողները մի մարդու պես գնան ընտրության, կլուծվի, էն էլ՝ ոնց կլուծվի:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԹՈՒՐՔ

ՆԱՐԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՑ ԱՌԱՋ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵՔ ԵՎ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՀԱՐՑԱՔՆՆԵՔ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆՔ

Եթե Հայաստանը լիներ կայացած պետություն, այս շաբաթվա իր վարքի համար Փաշինյանն արդեն հասարակությունից մեկուսացված կլիներ՝ կամ կալանավայրում, կամ հոգեբուժարանում: Փողոցում կենդանու նման ձայնարկող ու մարդկանց վրա հարձակվող արարածին ինչպե՞ս կարելի է թույլ տալ, որ շարունակի մնալ հանրության մեջ: Հետաքրքիր է՝ հարբեցողը կամ թմրամոլը կարո՞ղ է նման վարք դրսեւորել, թե՞ դա միայն հոգական խանգարում ունեցողներին է հատուկ:

Ամեն պարագայում, Արաբկիրում տված կիսախելագար rաcтроль-ներից հետո պարզ էր, որ Սամվել Կարապետյանի դեմ պայքարելու ոչ մի քաղաքական միջոց այլեւս ՔՊ-ն եւ Փաշինյանը չունեն: Հետեւաբար, զարմանալի չէ, որ հաջորդ օրն իրենք լուր տարածեցին, թե իբր Նարեկ Կարապետյանը ՌԴ քաղաքացիություն ունի, ինչն անմիջապես հերքվեց եւ Նարեկ Կարապետյանի, եւ ՌԴ իշխանությունների կողմից: Անհավանական է, այդ հերթական փուչիկը որեւէ շարունակություն չի ունենա:

Սակայն միայն հենց այն, որ ՀՀ ՆԳՆ-ն ինքնաբուխ, թե Փաշինյանի ցուցումով պատգամավորական թեկնածուների երկքաղաքացիության հարցերով է զբաղվում, արդեն ծիծաղ է առաջացնում: Որտե՞ղ էր այդ ՆԳՆ-ն այն ժամանակ, երբ Մեծ Բրիտանիայի քաղաքացի Արմեն Սարգսյանը Հայաստանում պաշտոնավարում էր որպես երկրի նախագահ: Եվ դա արվում էր Փաշինյանի կեղծումով, Փաշինյանի կոծկումով, Փաշինյանի հանցավոր ստախոսությամբ:

2018թ. փետրվար-մարտին ես եմ եղել այն անձը Հայաստանում, որ հրապարակավ բացահայտել է Արմեն Սարգսյանի բրիտանական քաղաքացիությունը: Եվ դա մեկ հոդվածով չի արվել, այլ ամբողջ յոթ հոդվածից բաղկացած շարքով, որ տպագրվել է «Հրապարակում»: Իրավապահ համակարգի եւ Նիկոլ Փաշինյանի հիշողությունը թարմացնելու համար հոդվածների վերնագրերը, տպագրության օրերը ստորեւ մեջբերում եմ:

1. ԱՐՔԱՅԱԶՆ ՉԱՐԼԶԻՑ՝ ՈՉ, ԲԱՅՑ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՏԱՍԽԱՆ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ (փետրվարի 7, 2018թ.)

2. ՀՀԿ-ՈՒՄ ԱՎԵԼԻ ԼԱ՞Վ ԳԻՏԵՆ, ԹԵ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆՆ ՈՒ ՆՐԱ ԿԻՆԸ ՈՐՏԵՂ ԵՆ ԱՊՐՈՒՄ (փետրվարի 13, 2018թ.)

3. ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՈԴԻՍԱԿԱՆԸ (փետրվարի 16, 2018թ.)

4. ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԸ (փետրվարի 24, 2018թ.)

5. ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԵՑ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ 2012-14ԹԹ. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ (փետրվարի 27, 2018թ.)

6. ՄԱԾՈՒՆԸ ՍԵՎ Է, ԾՐՋԱՆԸ՝ ՔԱՌԱԿՈՒՍԻ, ԻՍԿ ԽՆՁՈՐԸ ԲԱՆԱՆ Է (մարտի 2, 2018թ.)

7. ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՈՎ ՄԵՐ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է (մարտի 17, 2018թ.):

Քանի որ հոդվածաշարը տպագրել եմ ես, ինձ մոտ են Արմեն Սարգսյանի բրիտանական քաղաքացիությունն ապացուցող փաստաթղթերը, որոնք, ի դեպ, ոչ թե ինչ-որ Ալեն Սիմոնյանի կողմից «գտնված», չգիտես ինչ կառույցի, գոյություն ունեցող թե չունեցող ինչ-որ կայքի վերագրվող տեղեկություն կամ screenshot են՝ ոչ մի փաստաթղթային հիմք չունեցող (այսինքն՝ գործնականում զրպարտություն, որի համար Նարեկ Կարապետյանը ճիշտ կվարվի, եթե Ալեն Սիմոնյանին դատի տա՝ դիտավորությամբ իր հասցեին զրպարտանք տարածելու եւ իր քաղաքական գործունեությանը խոչընդոտել փորձելու համար), այլ Մեծ Բրիտանիայի պաշտոնական մարմնի պաշտոնական փաստաթղթեր են, որտեղ որեւէ կեղծիք թույլ տալը պատժվում է որպես քրեական հանցագործություն (մանրամասները՝ «ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԵՑ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ 2012-14ԹԹ. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ» հոդվածում):

Ահա, այդ պաշտոնական փաստաթղթերում, որոնք 2018-ին հրապարակել ենք եւ վաղը կայքում նորից կհրապարակենք, Արմեն Սարգսյանն իր ձեռքով սեւով-սպիտակին գրել, ստորագրել եւ Միացյալ Թագավորության Եկամուտների, հարկերի եւ տուրքերի ծառայությանը Her Majesty's Revenue & Customs (HMRC) հաղորդել է, որ ինքը Մեծ Բրիտանիայի քաղաքացի է (Country/State Usually Resident: UNITED KINGDOM, Nationality: BRITISH): Դա արել է եւ 2011-ին, եւ 2012-ին, եւ 2013-ին, եւ 2014-ին: 2015-ին ուղղակի Eurasia House International ընկերությունը լուծարվել է, եւ հաշվետվություններ չկան: Եթե Արմեն Սարգսյանի դեմ քրեական գործ չի հարուցվել, եւ նա ազատության մեջ է, նշանակում է՝ փաստաթղթերում տեղեկություններ չեն կեղծվել: Իսկ եթե չեն կեղծվել, եւ առնվազն 2011-ից ինքը Մեծ Բրիտանիայի քաղաքացի է (որտեղ էլ անամոթաբար ճողոպրեց 2022-ին եւ հետո Լոնդոնից գրավոր տեղեկացրեց ՀՀ նախագահի պաշտոնից հրաժարվելու մասին), ապա պետք է ՀՀ սահմանադրությունը ոտնահարելու համար, որպես քրեական հանցագործ, դատվի Հայաստանում, քանի որ ՀՀ սահմանադրությունը պահանջում է, որ ՀՀ նախագահի թեկնածուներն առնվազն վերջին 6 տարում հանդիսացած լինեն միայն ՀՀ քաղաքացի: Եվ այդ հոդվածը չի փոխվել Արմեն Սարգսյանին ընտրելուց առաջ:

Իսկ Սահմանադրությունը ոտնահարող հանցագործության մասին իմանալ-չիմանալու հիմքով պետք է պատասխանատվության ենթարկվեն նաեւ 2018-ի ԱԺ-ում ՀՀԿ խմբակցության անդամները, որոնք կեղծիքով Միացյալ Թագավորության քաղաքացուն ընտրել են ՀՀ նախագահ: Եվ նրանցից ոչնչով չտարբերվող Նիկոլ Փաշինյանը, որը եւս չորս տարի կեղծել ու կոծկել է Արմեն Սարգսյանի բրիտանական քաղաքացիությունը, դեռ մի բան էլ առանձին հանցագործություն է կատարել՝ ստելով, թե Արմեն Սարգսյանի՝ ՄԹ քաղաքացիության չեղարկման փաստաթուղթ է տեսել: Այդպիսի փաստաթուղթ բնության մեջ գոյություն չունի (ՄԹ ՆԳ քարտուղարի ստորագրությամբ եւ դրոշմակնիքով), եւ դա վստահ կարող եմ ասել 2018-2019 թվականներին Միացյալ Թագավորության Home Office-ի հետ իմ ունեցած գրագրության արդյունքում, որոնք՝ բոլորը, նույնպես առկա են:

Այնպես որ, Սամվել Կարապետյանին rebranding եղած ՀՀԿ-ական կոչելուց առաջ Փաշինյանը թող իր աչքի գերանը տեսնի եւ ՀՀԿ-ականների հետ համատեղ կատարած իր հանցագործությունները: ՆԳՆ-ն էլ եթե նախընտրական շրջանում ի չարս գործադրվող վարչական ռեսուրսի դերում չէ, թող քրեական վարույթ նախաձեռնի: Միջազգային դիտորդները, կազմակերպություններն ու դեսպաններն էլ թող տեսնեն, թե ինչ անարժանապատիվ, ստախոս եւ կեղծարար արարածի հետ գործ ունեն՝ ի դեմս Նիկոլ Փաշինյանի:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ԵԹԵ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐՈՂ Է, ԻՆՉՈՒ ՌԴ-Ն ՉԻ ԿԱՐՈՂ

«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Բենիամին Մաթեւոսյանն** է:

- Երեկ ռուսական լրատվամիջոցները ողողված էին Ռուսաստանի Անվտանգության խորհրդի հատուկ աշխատանքային խմբի նիստի ժամանակ Հայաստանի հասցեին հնչած աննախադեպ ծանր մեղադրանքներով՝ ՌԴ Անվտանգության խորհրդի նախագահ Սերգեյ Շոյգուի եւ այլ ռուս բարձրաստիճան պաշտոնյաների կողմից: Մինչ ռուսական կողմը պնդում է, որ Հայաստանի վարչապետը չի գործում դաշնակցային հարաբերությունների տրամաբանության մեջ, օրինակ՝ Զելենսկուն հակառուսական հայտարարությունների հարթակ տրամադրելով, փոխարենն այս ամենի՝ Փաշինյանը պնդում է, որ Ռուսաստանի նախագահի հետ ունի ջերմ հարաբերություններ, իսկ ԵԱՏՄ-ից դուրս գալու մտադրություն հայկական կողմը չունի: Ի դեպ, 2019-ին էլ նույն Փաշինյանն ասում էր, որ Վլադիմիր Պուտինն իր ընկերն է, սակայն գործողությունները փաստում են լրիվ հակառակի մասին: Ձեր կարծիքով՝ ի՞նչ ռիսկեր ու վտանգներ կան այս համատեքստում: Լարախաղացությամբ հաջողության հասնելը Փաշինյանի մոտ իսկապե՞ս ստացվում է :

- Հայաստանի Հանրապետությունում միայն մեկ մարդ կա, որ կարող է ասել, որ Վլադիմիր Պուտինն իր ընկերն է, եւ ներկայացնել իրականությունը, եւ այդ մարդը բնավ Նիկոլ Փաշինյանը չէ: Այստեղ ամենաֆունդամենտալ հարցը տնտեսական հարաբերությունների հնարավոր խզումն է: Անգամ Ալեքսեյ Օվերչուկը, որը մշտապես, անկախ քաղաքական պրոցեսներից, կողմ է եղել, որ հայ-ռուսական տնտեսական համագործակցությունը շարունակական լինի, այժմ ասում է, որ պետք չէ Հայաստանին ֆինանսավորել, եթե Հայաստանը համագործակցում է թշնամական կառույցների հետ: Տարեկան յոթ միլիարդ գումար միայն ՌԴ-ից Հայաստան է գալիս, չենք հաշվում դրամական փոխանցումները եւ մնացյալ գործարքները եւ հայերի արտագնա աշխատանքը Ռուսաստանում: Ռուսներն ասում են, որ Հայաստանը մեծ շահույթ է ստանում Ռուսաստանի Դաշնությունից, սակայն հրապարակային կերպով համագործակցում է մի կառույցի հետ, որը ՌԴ-ին ցանկանում է բոլոր ասպեկտներում մատնել պարտության: Ռուսաստանը բաց տեքստով ասում է, որ այլեւս դա չի հանդուրժելու եւ Հայաստանին չի ֆինանսավորելու: Ինչ վերաբերում է ԵԱՏՄ-ին, ապա Արարատ Միրզոյանը հայտարարել է, որ առանց Հայաստանի համաձայնության եւ առանց կոնսենսուսի հնարավոր չէ, որ ապահարզան տեղի ունենա: Միջազգային հարաբերությունները երկկողմանի ճանապարհով երթեւեկություն են: Եթե Հայաստանը կարող է առանց ՌԴ-ի համաձայնության սառեցնել հարաբերությունները ՀԱՊԿ-ի հետ, ապա ինչպե՞ս է ստացվում, որ Ռուսաստանը չի կարող կասեցնել Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին: Այս ամենը չհասկանալը առնվազն միամտություն է: Ռուսական կողմը կարող է պարզապես դատարան դիմել, եւ վերջ, առնվազն այդ ընթացքում Հայաստանի անդամակցությունը կասեցվում է: Հետաքրքիր կլինի, թե ինչպես են սա մեկնաբանելու Հայաստանի իշխանությունները, թեպետ հույս ունեմ, որ բանը չի հասնի դատական պրոցեսներին, քանի որ կան նաեւ հարցը լուծելու այլ տարբերակներ, սակայն մի բան հստակ է, որ ո՛չ Արարատ Միրզոյանը, ո՛չ Ալեն Սիմոնյանը եւ ո՛չ էլ Նիկոլ Փաշինյանը այս պրոցեսների վրա չեն կարող որեւիցե ազդեցություն ունենալ: Ռուսաստանում էլ, ինչպես բոլոր երկրներում, կան տարբեր քաղաքական թեւեր, Ռուսաստանում կար մի թեւ, որը կարծում էր, որ Հայաստանի հետ կարելի է հարաբերություններն ամրապնդել բացառապես տնտեսական զարգացման շրջանակներում, սակայն քաղաքական իմաստով ասում էին, որ Հայաստանն ինչ ուզում է, կարող է անել, կարող է անգամ գնալ ԵՄ եւ այլն: Այս տեսակետը վերջին իրադարձություններից հետո պարզապես պարտության մատնվեց:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻԿՈԼԸ ԳԻՏԱԿՑՈՒՄ Է՝ ԵԹԵ ԶՐԿՎԻ ԱԹՈՌԻՑ, ԻՐԵՆ ԿԴԱՏԵՆ ՄԻԱՆԳԱՄԻՑ, ԳՈՒՅԵ ՌԱԶՄԱԿԱՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ԱՌԱՋ ԿԱՆԳՆԻ

*Հարցազրույց դերասան, բեմադրիչ **Կարեն Խաչատրյանի** հետ*

- Օրերս մի խումբ մտավորականներ հանդիպեցին Վեհափառի հետ, նախաձեռնությունը մտավորականներին էր, մասնավորապես՝ Ժիրայր Դադասյանինը: Դուք նույնպես մասնակցել եք հանդիպմանը: Ո՞րն էր հանդիպման նպատակը:

- Հիմնական նպատակը Եկեղեցուն եւ Վեհափառին զորակցելն էր եւ որոշակի հարցերի պատասխաններ ստանալը: Կարծում եմ՝ շատ կարեւոր էր այդ հանդիպումը, լսեցինք իրար, լսեցինք Վեհափառին: Ես նույնպես հարց ուղղեցի, որ հասարակության լայն շերտերը խոսում են բարեփոխումներից, ինչ է մտածում Եկեղեցին այդ մասին: Վեհափառն ասաց, որ խորհում են այդ ուղղությամբ, որ բարեփոխումներ պետք են եւ միշտ արվել են: Այսինքն՝ մեղադրել Եկեղեցուն, որ բարեփոխումներ չի ուզում անել, ճիշտ չէ: Վեհափառի այդ պատասխանն ինձ համար շատ կարեւոր էր: Հիմնականում սա էր, որ այս հալածանքների, այս դատավարությունների ու կալանավորումների պայմաններում մենք մեր դիրքորոշումը, աջակցությունը հայտնեցինք:

- Աջակցությունը եւ մեր Եկեղեցուն էր, եւ Վեհափառին, եւ սրբազաններին, որոնք ԱԱԾ մեկուսարաններում են կամ տնային կալանքի մեջ: Կարո՞ղ ենք այդպես ընկալել՝ մտավորականների դիրքորոշում:

- Այո: Ես նաեւ սրբազանների դատավարությանն եմ մասնակցել, եւ ինձ համար շատ հաճելի էր, որ ժողովուրդը նույնպես գնում էր՝ տարբեր շերտեր, տարբեր մարդիկ: Նույնիսկ նստելու տեղ չկար, սպասում էինք դրսում, որ տեղ ազատվեր, մեկը դուրս գար՝ մյուսը մտներ: Մեծ հարգանք կար, մեծ ակնածանք, եւ դա, իհարկե, գովելի է:

- Մենք մի կետի ենք հասել, որ ստիպված ենք մեր Եկեղեցին, մեր սրբություններն ու արժեքները սեփական իշխանություններից պաշտպանել, որոնք կոչված են դրանց պաշտպանը լինելու:

- Չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, որ Նիկոլը, ըստ էության, Թուրքիայի թեկնածուն է, մեր՝ հայերիս թեկնածուն չէ: Իր նախընտրական ծրագրում Եկեղեցու մասին գրվածը նույնպես հակահայկական երեւույթ է: Ինքը տանում է այն թեզերը, որոնք կարեւորում, որոնց մասին խոսում են թուրքերը, իրենց հոգեւոր առաջնորդը, Ալիեւը: Իրենք ինչ որ խոսում են մեր Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին, նույնը Նիկոլն է ասում եւ անում: Այստեղից հետեւություն, որ Նիկոլն ուղղակի թուրքերի թեկնածուն է: Դա նույնիսկ չեն թաքցնում թուրքերը, գովում են եւ մեզ՝ հայերիս, կոչ անում՝ Նիկոլին ընտրել: Թուրքերն ավելի շատ են գովում Նիկոլին, քան այստեղ իրեն լոբբինգ անողները: Իսկ հանրությունն ամեն բան լսում եւ լուռ տանում է: Եթե մենք նորմալ հասարակություն լինեինք, այդպիսի կուսակցությանն ընդհանրապես պետք է մերժեինք, երբ իր նախընտրական ծրագրում Եկեղեցու մասին այդպիսի աննորմալ, հակահայկական թեզ է մտցրել: Մենք հանրային մեծ պարսավանք պիտի ցույց տայինք, բայց դա, ցավոք սրտի, չկա: Կան անհատ մարդիկ, որոշակի խմբեր, մտավորականներ կամ արվեստի մարդիկ, որոնք այս կամ այն չափով այդ մասին խոսում են, եւ վերջ: Սա է ցավալին:

- Նիկոլը մի կողմից ասում է՝ եթե Սամվել Կարապետյանն ընտրվի, մեր տղաներին ուղարկելու է Ռուսաստան՝ պատերազմի, մյուս կողմից էլ ասում է, որ իր ընտրվելու դեպքում մենք ուկրաինական կողմից ենք պատերազմին մասնակցելու: Ինչպե՞ս տարբերենք Նիկոլի խաղաղության գլուխն ու պոչը:

- Դեռեւս 18 թվականին Նիկոլին զգուշացնում էին որոշակի քաղաքական շրջանակներ, որ պետք չէ Հայաստանը սարքել ուժային կենտրոնների բախման տեղ: Մեր պատմության ընթացքում մենք միշտ ունեցել ենք նման խնդիրներ, Հայաստանը դարձրել ենք թատերաբեմ, որից մենք տուժել ենք: Հիմա Նիկոլը նորից դա է անում, եւ, մեծ հաշվով՝ հայ ժողովուրդը: Մենք մեր քիթը խոթում ենք մի տեղ, որն ընդհանրապես մեզ պետք չէ: Մի կողմից էլ, Նիկոլի խոսույթներին ես լուրջ չեմ վերաբերվում, երբ ասում է՝ այս կանեմ, այն կանեմ, որովհետեւ այսօր մի բան է ասում, հաջորդ օրը՝ մեկ այլ բան ասում, երրորդ օրը՝ լրիվ ուրիշ բանի մասին խոսում: Հիմա պետք չէ ներվ փչացնել, ուղղակի պետք է կենտրոնանալ այն բանի վրա եւ ամեն ինչ անել, որ Նիկոլը չընտրվի նորից: Բան չմնաց, օրեր չմնացին, պիտի ներվերը խնայել, շատ ճիշտ աշխատանք տանել, բացատրել մեր ընկերներին, հարազատներին: Ես հասկանում եմ այն մարդկանց, ովքեր չեն ուզում ընտրել նախկին նախագահներին կամ նրանց հարող ուժերին: Այդ մարդկանց ասում եմ՝ եթե չեք ուզում ուրիշին ընտրեք, ընտրության լայն հնարավորություն կա, ուժեր կան, որ ո՛չ նրանցից են, ո՛չ էլ սրանցից են: Այսինքն, ընտրության գնալ է պետք, եւ պատճառ չպետք է բռնել՝ բա ո՞ւմ: Սա անիմաստ հարց է. կան մարդիկ, գնա՛ եւ ընտրի:

- Իսկ ինչպե՞ս եք պատկերացնում հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները:

- Կարող է երկու տարբերակ լինել: Ընդդիմադիր ուժերը միասնական ձայներով գուցե կամ հաստատ ավելի աթոռներ ստանան Ազգային ժողովում, քան Նիկոլը: Դա լավ տարբերակ կլինի: Նաեւ հնարավոր է երկրորդ փուլ լինի, բայց դա մի քիչ վտանգավոր է, արդյո՞ք այն մնացած ուժերը կհամաձայնեն միավորվել, գեներացնել ուժ, որովհետեւ հակասություններ կան՝ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ: Բարդ պրոցեսներ կարող են լինել: Բայց այստեղ կարեւոր են նաեւ հասարակության ճնշումները, այսինքն՝ հասարակության լայն շերտերը պետք է ակտիվ լինեն, իրենց ասելիքը գուցե գեներացնեն նաեւ փողոցային պայքարով: Ժողովուրդն ինքն էլ ստիպի, որպեսզի հասկանալի լինեն այդ միավորման եզրերը եւ մեզ համար, եւ քաղաքական դաշտի: Դժվար է լինելու: Ես վախենում եմ, որ այս ընտրությունները գուցե այդքան արդար էլ չլինեն, որովհետեւ Նիկոլը հասկանում է, որ սա ճակատագրական է իր համար նաեւ անձնական առումով, եւ ՔՊ-ի համար: Նիկոլը գիտակցում է, որ եթե զրկվի աթոռից, իրեն կդատեն միանգամից, ինքը կկանգնի գուցե ռազմական տրիբունալի առաջ, եւ մտածում է, որ նույնիսկ ՔՊ-ն կարող է արգելվի մի քանի տարի, եթե ոչ՝ ընդհանրապես, որպես հակահայ, ապազգային կուսակցություն: Այնպես որ՝ տարբերակներ կան, տեսնենք: Ինձ թվում է, որ ամեն ինչ կարող է որոշել վերջին շաբաթը, թե ով ինչ կասի, եւ հանրությունը կգա ինչ-որ հայտարարի:

- Ընտրությունից անմիջապես հետո փողոցը պետք է ակտիվ լինի, պահանջատեր, իր ձայնի տերը, խաղաղ ու անցնցում, որպեսզի խուսափեն թիվ նկարելուց: Եվ ցանկալի է, որ ԱԺ անցած ընդդիմադիր ուժերը միավորվեն: Դուք տեսնո՞ւմ եք այդ հնարավորությունը:

- Շատ կարեւոր է, թե այդ ընդդիմադիրներից ով ավելի շատ ձայն կհավաքի: Մյուսները գիտակցելով միավորվեն այդ շատ ձայն հավաքածի շուրջը, ոչ թե ամբիցիաներ անեն եւ ասեն՝ ճիշտ է, ես քիչ ձայն եմ հավաքել, բայց քո ձայնը ինձ տուր: Սրանից է կախված, տեսնենք, թե ով է շատ ձայն հավաքելու: Ես դա հավանական եմ համարում, որովհետեւ, հաշվի առնելով ինչ որ խոսում են եւ կոնկրետ այսօրվա իշխանության հետ կապված իրենց վերաբերմունքը, հասկանում եմ, որ միավորումը բնական կլինի եւ անհրաժեշտ: Նիկոլն ի՞նչ է անում հիմա՝ այդ երեք ուժերին վիրավորում է, ինքն ամեն ինչ անում է, որ իր հանդեպ ատելության դոզան ամեն օր բարձրանա: Նայում եւ ասում եմ՝ այդ ի՞նչ ես խոսում, լրիվ ապուշացել ես արդեն, բայց մյուս կողմից էլ ասում եմ՝ լավ է, խոսիր, խոսիր, ինչքան այդպես խոսես, այդքան ձայն կորցնում ես: Եվ դա ես տեսնում եմ, ամեն օր իր էլեկտորատը պակասում է: Ինքը գիտակցում է, որ հողը ոտքերի տակից փախչում է, իր ամբողջ ջղաձգումը դրանից է գալիս, ինքը հասկանում է, որ 50+ չի տանելու, եւ դա իրեն շատ կատաղեցնում է: Գիտի, որ այսօր 21 թիվը չէ, ուրիշ իրավիճակ է, ինքը գիտի, որ ինչքան էլ կրկնվի, Քոչարյան ու Սամվել խաղացնի, չի ստացվելու: Վախից է, ինքը գիտի, որ դատվելու է, եւ իր այդ վարքագիծը գալիս է հաստատելու, որ ինքը խոր մտահոգությունների մեջ է:

- Դուք տեսնո՞ւմ եք, որ իշխանությունը փոխվելուց հետո պատերազմ կլինի, ինչով որ վախեցնում են ժողովրդին:

- Աբսուրդ է, երբ իշխանությունն իր ժողովրդին շանտաժի է ենթարկում պատերազմով՝ ընտրություններից առաջ: Ինքը շանտաժի ենթարկեց Տավուշի ժողովրդին՝ ասելով. չտաք, պատերազմ կլինի: Այստեղ այնքան մեծ անբարոյականություն կար, եթե այդ մարդիկ ասեին՝ չէ, ու հանկարծ ինչ-որ բախում լիներ, պիտի ամբողջ ժողովրդի ատելությունը գեներացնեին տավուշցիների դեմ՝ այ, դուք արեցիք: Պատկերացնո՞ւմ եք այդ մարդկանց վիճակը, իբր իրենց պատճառով էլի զոհեր եղան: Անընդունելի բան է, թշնամացնում է նույնիսկ մարզը մարզի դեմ: Գիտե՞ք, թե հետաքրքիրը որն է. Ալիեւն այնտեղից է վախեցնում, Նիկոլն այստեղից է վախեցնում: Նիկոլը թուրքի թեկնածուն է: Նիկոլը մեր միջից ուզում է հանել հերոսականությունը, ոգեղենությունը: Իր համար հերոսը հարկ վճարողն է: Սա ապականություն է, ազգի ողնաշարը ջարդում է: Այսօր մենք չենք խոսում ո՛չ Ազգալդյանի մասին, ո՛չ Մոնթեի մասին, ո՛չ էլ մեր մյուս հերոսների: Եվ Նիկոլն Արցախն ուզում է սարքել ինչ-որ միֆ, որ եկավ ու անցավ: Բայց դա այդպես չէ, իհարկե: Հերոսները կան, հերոսների մասին մենք չենք մոռացել, եւ ոչ ոք չի մոռանում, Եռաբլուրն էլ թույլ չի տալիս, որ մոռանանք: Եվ այն խոսույթը, որ Նիկոլն ասում է, թե ղարաբաղցիք չեն կռվել, դա կեղտոտ սուտ է, ես պատերազմից հետո Արցախում տեսել եմ, թե ինչքան մարդ էր թաղված՝ նոր գերեզմաններ: Սա արդեն վերջն է, սրանց լուրջ չպետք է վերաբերվել, մի քանի օր է մնացել, մենք պետք է մեր ուշադրությունը, մեր ուժը կենտրոնացնենք նրա վրա, որ Նիկոլը թուրքի թեկնածու է, Նիկոլը հայի թեկնածու չէ եւ չպետք է ընտրվի, վերջ:

- Այդուհանդերձ, կա մի զանգված, որ ողջունում է այս իշխանության աղետալի քայլերը, հաշտ է այս ամենի հետ, կան նաեւ անտարբերներ: Ինչի՞ հետեւանք է նման անկումը:

- 88-ի շարժման ժամանակ մտավորականներն էին կանգնած, եւ առաջին գումարման ժողովում հենց նրանք էին պատգամավորները: Եվ իրենք լավ օրինակ էին՝ որպես էլիտա: Բայց հետագայում ի՞նչ տեղի ունեցավ. կամաց-կամաց սկսեցին հարել այս կամ այն կուսակցությանը, շատ բացասական երեւույթների վրա աչք փակել, խոսել կուսակցական շահից ու հաշվարկներից, ոչ թե անձնական վերաբերմունքից: Այդպես մտավորականության ձայնն ապականվեց, եւ սկսեցին հաշվի չառնել: Մտավորականն ինքն իրեն վարկաբեկեց: Սա շարունակվեց-շարունակվեց, եւ արդյունքում ստացվեց, որ մտավորականությունն իրենից ոչ մի բան չի ներկայացնում, որ այդ էլիտա ասվածը ձեւական բան է: Այդ անհատների կողմից ոչ մի հանրային պարսավանք տեղի չունեցավ այս կամ այն երեւույթի հանդեպ, ոչ մի գնահատական չտրվեց: Ժողովուրդն էլ, տեսնելով, որ էլիտան ձայն չի հանում, ինքն էլ ասաց՝ իմ եղունգով իմ գլուխը քորեմ: Նույնիսկ ընտրակաշառքների ժամանակ մտավորականությունը ձայն չհանեց, թե այս ինչ է կատարվում, ժողովուրդն ապականվում է: Եվ այսպես ժողովրդին փչացրին-փչացրին, արդյունքում ունեցանք սա: Բայց ես կարծում եմ, որ մեր հայի գենը, այնուամենայնիվ, ունի իմունային համակարգ: Մենք, ճիշտ է, ունենք շատ բացասական երեւույթներ, բայց ես հակված եմ մտածելու՝ Բայրոնը ճիշտ էր ասում, որ հայի մեջ բացասական երեւույթները ձեռքբերովի են, այսինքն՝ դրանք մերը չեն: Եթե ինչ-որ բան ձեռքբերովի է, ապա դրանից կարելի է ազատվել, եւ հիմա այդ պրոցեսն սկսվել է: Այդ վատ երեւույթներից հայ մարդն սկսում է ազատվել արդեն, ազատագրվել այդ բացասականից եւ դարձյալ նայել դեպի ակունքներ, դեպի սկիզբ՝ այն մաքուրը, եւ այնտեղից նորից գալ: Այս ընտրություններն իսկապես ճակատագրական են լինելու, ինձ թվում է՝ բոլորը գիտակցում են, որ շատ բան է կախված դրանից: Նախորդ ընտրություններից այսքան բան կախված չէր, թերեւս, բայց այս ընտրություններից շատ բան է կախված՝ մեր երկրի ապագան, ընդհանրապես՝ մեր լինել-չլինելը: Սա արդեն գոյաբանական խնդիր է: Հիմա ուղղակի օր չի մնացել, ժամ չի մնացել, խնդիրը Նիկոլից ազատվելն է, հետո կնստենք ու կխոսենք խնդիրներից, թե ինչ պահաջել նոր իշխանություններից:

Հուսիկ Արա

ԻՆՉՈ՞Ւ ՊԻՏԻ ՁԻՋԵՆՔ ՄԵՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ԱՆԿԱԽ ՆՐԱՆԻՑ՝ ԹՐԱՄՓԻՆ ԴՈՒՐ ԳԱԼԻ՞Ս Է, ԹԵ՞Ո՞Ղ

Արա ԱԼՈՅԱՆ

«Հրապարակի» զրուցակիցն Ուկրաինայի նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտի (ՌՀԱԻ) արտաքին հետազոտությունների կենտրոնի նոր մարտահրավերների բաժնի ղեկավար **Ելենա Բորդիլովսկան** է:

- Ռուս-ուկրաինական պատերազմի հարցով բանակցությունները վերջին ամիսներին փակուղի են մտել. գլոբալ պատճառը Իրանի դեմ ռազմական արշավն էր, Մերձավոր Արեւելքում ստեղծված պատերազմական իրավիճակը: Հիմա այլ դրություն է, կողմերը հարաբերական հրադադարի մեջ են: Սա հիմք տալիս է, որ բանակցությունները վերսկսվեն:

- Ինչ վերաբերում է ռուս-ուկրաինական խաղաղ բանակցությունների գործընթացին, ես դա ուղիղ կախվածության մեջ չէի դնի այն բանի հետ, ինչը կատարվում է Իրանի շուրջ, որովհետեւ հրադադարն այնտեղ բավականին անկայուն է, իրավիճակն անորոշ է, պարբերաբար այս կամ այն կերպ շարունակվում են ռազմական գործողությունները: Եվ Ուկրաինան հազիվ թե այդպես ուժեղ կախում ունենա այն ամենից, ինչը կատարվում է այնտեղ: Անկախ այն բանից, թե Իրանի շուրջ ստեղծված իրավիճակից, մենք Ուկրաինայում չափազանց թերահավատորեն ենք վերաբերվում որեւէ միջնորդի միջոցով մոտ ապագայում Ռուսաստանի հետ բանակցությունների վերսկսման հնարավորությանը: Մենք անվստահությամբ ենք ընդունում ցանկացած առաջարկ, առավել եւս՝ երբ ԵՄ-ի կողմից հավանական բանակցողի կարգավիճակում նշվում են այնպիսի գործիչների անուններ, ինչպիսիք են Գերմանիայի նախկին կանցլերներ Գերհարդ Շրոյդերն ու նույնիսկ Անգելա Մերկելը: Դա մեզ համար գործնականում ծիծաղելի է: Ինչպես են դրան վերաբերվում եվրոպացիները, դա եւս քաջ հայտնի է: Բնականաբար, դա պետք է լինի եվրոպական գործող քաղաքական գործիչ, որն իրապես ուժեղ արտահայտում է Եվրոպայի դիրքորոշումը, այլ ոչ թե մեկը, որը ՌԴ-ի ազդեցության տակ է կամ երբեւէ լավ հարաբերություններ է ունեցել Ռուսաստանի հետ: Հետեւաբար այն, ինչ վերաբերում է խաղաղ բանակցություններին, Ուկրաինայում այժմ մեծ թերահավատություն է առաջացնում, անկախ նրանից՝ ԱՄՆ-ն Իրանի հետ կապված դադմ՞ր է վերցնում, թե՞ ոչ: Մենք չենք տեսնում, որ ՌԴ-ն բանակցելու ցանկություն ունի, հատկապես՝ վերջին հարձակումներից եւ Ուկրաինայի տարբեր քաղաքներում բազմաթիվ զոհերից հետո: Բայց եթե իրապես տեսնենք Ռուսաստանի կողմից նման իրական ցանկություն, ինչպես նաեւ՝ ԵՄ-ի կողմից նորմալ բանակցողի, իհարկե՝ մենք պատրաստ ենք:

- Խաղաղ կարգավորման վերաբերյալ պայմանավորվածություններ չկան, քանի որ Զելենսկին տարածքային զիջումների չի գնում, ասված է Պենտագոնի գլխավոր տեսուչի զեկույցում: Փաստորեն, ԱՄՆ-ն Կիեւին մեղադրում է տարածքային զիջումների չգնալու մեջ: Սա դաշնակցի կողմից ողջամի՞տ պնդում է, չէ՞ որ խոսքը նման ցավոտ հարցի մասին է:

- Ինչ վերաբերում է տարածքային հարցերին, բնականաբար, ինչ-որ մեկին դա դուր է գալիս, ինչ-որ մեկին՝ ոչ, բայց դա մեզ համար սկզբունքային հարց է: Ինչո՞ւ մենք պետք է զիջենք մեր տարածքները, հատկապես՝ հիմա, երբ Ռուսաստանը հսկայական կորուստներ է կրում, փաստորեն, ոչ մի հաջողություն չունի ռազմաճակատի տարբեր հատվածներում, նոր քաղաքներ չի գրավում, եւ գյուղերի մասին էլ հազվադեպ է խոսք գնում: Ինչո՞ւ պատերազմի այս փուլում, երբ Ուկրաինան գտնվում է բավականին ուժեղ դիրքում, մենք պետք է հանձնենք մեր տարածքները: Դա կարող է դուր չգալ Պենտագոնին, Թրամփին, որեւէ այլ մեկի, բայց մեր այս դիրքորոշումը հստակ է ու հասկանալի:

- Ուկրաինայի նախագահը նշել է, որ ձեր համար թիվ մեկ առաջնահերթությունը հակահրթիռային պաշտպանությունն է: Զելենսկին նաեւ հույս է հայտնել, որ Ուկրաինան կհամագործակցի եվրոպացի գործընկերների հետ համատեղ հակահրթիռային համակարգի հարցում: Ուրիշ ի՞նչ առաջնահերթություններ կարող եք մատնանշել, եւ ի՞նչ է արվում այդ ուղղություններով:

- Ինչ վերաբերում է եվրոպացի մեր դաշնակիցների օգնությանը, ապա՝ այո, մեզ համար ՀՕՊ-ը կարեւոր է, որովհետեւ, ինչպես ասացի, Ռուսաստանը շարունակում է հարվածներ հասցնել Ուկրաինայի քաղաքներին, եւ դա իսկապես առաջնահերթություն է մեզ համար՝ պաշտպանելու մեր երկրի խաղաղ բնակչությանը, եւ հարցը նույնիսկ ռազմաճակատի մասին չէ: Մենք, իհարկե, շնորհակալ կլինենք նման աջակցության համար, եւ մեզ, առհասարակ, հետաքրքրում է ցանկացած ռազմական օգնություն. եւ արկեր, եւ հետախուզական տվյալներ, եւ արհեստական բանակցության ասպարեզում համագործակցություն, որն այժմ բավականին ակտիվացել է ոչ միայն եվրոպացի, այլեւ ամերիկացի գործընկերների հետ, եւ դա մեզ մեծապես օգնում է մեր պայքարի եւ Ռուսաստանի, եւ, ցավոք սրտի, Բելառուսի տարածքից այսօր եկող սպառնալիքների չեզոքացման հարցում:

- Մայիսի 9-11-ը, Հաղթանակի օրվա կապակցությամբ, Ուկրաինայի եւ Ռուսաստանի միջեւ եռօրյա հրադադար հաստատվեց, նաեւ պայմանավորվածություն եղավ ռազմագերիների փոխանակման շուրջ՝ 1000-ը 1000-ի դիմաց ձեւաչափով: Հիմա էլ Զելենսկին առաջարկել է, այսպես կոչված, «օդանավակայանային հրադադար» հաստատել: Ի՞նչ է դա եւ արդյո՞ք հրադադարների այս ինտենսիվությունը կարող է մոտեցնել բաղձալի խաղաղությանը:

- «Օդանավակայանային հրադադարի» մասին ես, ցավոք սրտի, որեւէ բան չեմ կարող ասել, չգիտեմ՝ դա ինչ նախաձեռնություն է, ինչ կերպ կարող է դրսեւորվել, որովհետեւ Ուկրաինայի օդանավակայանների բացման մասին ժամանակ առ ժամանակ խոսակցություններ լինում են, հարցը երբեմն արդիական է դառնում, բայց մոտ ապագայում մենք չենք տեսնում, որ դա կարող է իրականացվել մշտական օդային հարվածների եւ առկա սպառնալիքների պայմաններում: Դժվար թե դա հնարավոր լինի:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 23.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՄՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՆՄՈՐՁ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Նախկին զինծառայող, պահեստազորի սպա, փաստաբան Վահագն Հակոբյանը կրկին ահազանգում է ռազմաբժշկական փորձաքննությունների ոլորտում տիրող բարձիթողի վիճակի մասին: Ըստ փաստաբանի. «Պարզ հաշվարկները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում ամենատարածված փորձաքննությունները ռազմաբժշկական փորձաքննություններն են, որոնցով զորակոչի եւ վարժական հավաքների ընթացքում, ինչպես նաեւ՝ քրեական վարույթների շրջանակներում որոշվում է անձանց պիտանիությունը զինվորական ծառայությանը: Թեեւ, դրանով պայմանավորված, ռազմաբժշկական փորձաքննություններն իրենց կարեւորությամբ, մեղմ ասած, չեն զիջում փորձաքննությունների այլ տեսակներին, եւ դրանց արդյունքներից է կախված ոչ միայն անձանց առողջության պահպանումը, այլ նաեւ զինված ուժերի իրական մարտունակությունը, բայց մեր իրավապաշտպան գործունեության ընթացքում ի հայտ են եկել այդ ոլորտում վաղուց առկա եւ դեռեւս լուծում չստացած լրջագույն իրավական խնդիրներ: Այսպես, ռազմաբժշկական փորձաքննությունը, համաձայն «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի, փորձաքննության ինքնուրույն տեսակ է, որի կարգը սահմանվում է ՀՀ կառավարության 13.04.2018թ. թիվ 405-Ն որոշմամբ: Թեեւ յուրաքանչյուր զորակոչի ընթացքում ձեւավորվում են ռազմաբժշկական հանձնաժողովներ, բայց դրանցում ընդգրկվող բժիշկները չեն հանդիսացել եւ այժմ չեն հանդիսանում ռազմաբժշկական ոլորտի փորձագետներ, քանի որ այդպիսիք ՀՀ-ում առկա չեն: Արդյունքում, թեեւ զինվորական ծառայության համար անձի պիտանի լինելը ձեւականորեն որոշվում է հենց ռազմաբժշկական կոչվող հանձնաժողովների կողմից, բայց այդ հանձնաժողովների անդամները չունեն ռազմական բժշկության ոլորտի փորձագետի որակավորում, հետեւաբար՝ նաեւ փորձաքննություն իրականացնելու իրավունք: Ավելի պարզ՝ զինակոչիկի՝ զինվորական ծառայության համար պիտանիությունը ռազմաբժշկական փորձաքննության անվան տակ որոշվում է բովանդակությամբ այդպիսին չհանդիսացող փորձաքննության արդյունքում, եւ, փաստորեն, ռազմաբժշկական փորձագետ չհանդիսացող անձանց կարծիքի հիման վրա առողջական լուրջ խնդիրներ ունեցող անձինք երբեմն զորակոչվում են զինված ուժեր, որի հետեւանքով ոչ միայն արձանագրվում է անձի առողջական վիճակի վատթարացում, այլեւ անհարկի ծանրաբեռնվում են զինվորական հոսպիտալները: Ավելի վտանգավոր է այն, որ, ըստ էության, նույնկերպ՝ ռազմաբժշկական ոլորտի փորձագետ չհանդիսացող անձանց կարծիքի հիման վրա քրեական հետապնդման են ենթարկվում կամ դատապարտվում առողջական խնդիրներ ունեցող եւ այդ պատճառով զորակոչվելու մասին որոշման հետ անհամաձայնություն ունեցող անձինք»:

Վ. Հակոբյանը հավելեց նաեւ. «Խնդիրը մեր կողմից բարձրացվել է իրավասու գերատեսչությունների, այդ թվում՝ ՀՀ կառավարության առջեւ, բայց այն դեռեւս լուծված չէ»: Հուսամ, որ սույն հրապարակումը կօգնի ռազմաբժշկական փորձաքննությունների հետ կապված խնդիրների լուծմանը:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am